233744

# ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

## ՎԱՍՆ ԱՄԵՆԱՅՆ ՊԱՏԱՀԱՐԱՑ ՈՐՔ ԳԱՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՐԴՈՑ

ԱՃՂԱ

1742

23374

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ՏԵԱՌՆ
ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՑ ԲԱՐԵԿԱՐԳ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՊԵԱԼ

1712

Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ
ԱՊՈՒՉԵԽՑԻՈՑ



# ԱՂՕԹՔ

## ՍՐԲԱՐԵԱԼ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

*Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և Սբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամ եղելոց. ողորմեա՛ քո արարածոցս։*

*Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժա-*

նելի լոյս, միասնական ն̃ը երրոր-
դութիւն և միա̃ծութիւն, արարիչ
լուսոյ և հալածիչ խաւարի· հա-
լածեա 'ի հոգւոյ իմմէ զխաւար
մեղաց և անգիտութե̃, և լուսա-
ւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայս
միկ աղօթել քեզ 'ի հաճոյս, և
ընդունել 'ի քէն զխնդրուածս
իմ· ողորմեա ինձ բազմամեղիս։

Հայր երկնաւոր ա̃ծ ճշմարիտ՝
որ առաքեցեր զորդի քո սիրե-
լի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին,
մեղայ յերկինս և առաջի քո· ըն-
կալ զիս ո̃պ զանառակորդին, և
զգեցո ինձ զպատմուճանն զա-
ռաջին զոր մերկացայ մեղօք·
ողորմեա քո արա։

Որդի ա̃յ ա̃ծ ճշմարիտ՝ որ խո-
նարհեցար 'ի հայրական ծոցոյ՝ և

առեր մարմին 'ի սբ̃յ կուսէն Մա-
րիամայ վ̃ն մերոյ փրկուե̃, խա-
չեցար և թաղեցար և յարեար 'ի
մեռելոց՝ և համբարձար փառօք
առ Հայր, մեղայ յերկինս և առա-
ջի քո. յիշեա զիս որպ̃ զաւա-
զակն՝ յորժամ գաս արքայութ̃բ
քով. ողորմեա։

Հոգի ա̃յ ա̃ծ ճշմարիտ՝ որ ի-
ջեր 'ի յորդանան և 'ի վերնատու-
նըն, և լուսաւորեցեր զիս մկըր-
տութ̃բ ս̃բ աւազանին, մեղայ
յերկինս և առաջի քո. մաքրեա
զիս վերստին ա̃ծային հրով քո՝
որպ̃ հրեղէն լեզուօք ս̃բ զառա-
քեալսն. ողորմեա։

Անեղ բնութի̃՝ մեղայ քեզ
մտօք իմովք, հոգւով և մարմնով
իմով. մի յիշեր զմեղս իմ զառա-

ջինս վ՟ն անուանդ քում սրբոյ. ողորմեա։

Տեսօղ ամ՟ի՝ մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի դպրութե՟ն կենաց. ողորմեա։

Քննօղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութ՟բ և անգիտութ՟բ. թողութի՟ն շնորհեա մեղաւորիս, զի 'ի ծնընդենէ ս՟բ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի ած՟ութե՟դ քո զգայարանօք իմովք, և ա՟մ անդամօք մարմնոյս. ողորմեա։

Ամենախնամ տ՟ր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո ս՟բ ոչ ևս հայիլ յարատ, և ական-

ջաց իմոց՝ ոչ ախորժել լսել բըզ-
բանս չարուն, և բերանոյ իմոյ՝
ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ՝
ոչ խորհիլ զչարութիւն, և ձեռաց
իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն,
և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանա-
պարհս անօրէնութեան․ այլ ուղ-
ղեա զշարժումն սոցա լինել միշտ
ըստ պատուիրանաց քոց յամի․
ողորմեա։

Հուր կենդանի քո՝ զհուր սի-
րոյ քո զոր արկեր յերկիր, բոր-
բոքեա յանձն իմ․ զի այրեսցէ
զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ
զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ
զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ
զլոյս գիտութեան քո 'ի սրտի ի-
մում. ողորմեա։

Իմաստութիւն հօր յո՛ տուր ինձ

իմաստու՟ն, զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քո յա՟մ ժամ. 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս. ողոր։

Կամեցող բարեաց տէ՟ր կամարար՝ մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. ողորմեա։

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայու՟ն քո զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. ողոր։

Խնամող արարածոց՝ պահեա նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձու՟եց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յա՟մ վտանգից

հոգւոյ և մարմնոյ . ողորմեա ։

Պահապան ամ̃ի քս̃՝ աջ քո հովանի լիցի 'ի վ̃ր իմ 'ի տուէ և 'ի գիշերի. 'ի նստել 'ի տան, 'ի գընալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի երբեք սասանեցայց . ողորմեա ։

Աստուած իմ՝ որ բանաս զձեռն քո, և լնուս զամ̃ արարածս ողորմութ̃ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. ողորմեա ։

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս 'ի չար սովորութ̃ց իմոց 'ի բարի սովորութ̃ի. և բևեռեա 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր

արքայութեանն, զի զղջացայց 'ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. ողորմեա:

Աղբիւր անմահուե̃՝ աղբերացո 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան ոպ̃ պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. ողորմեա:

Պարգևիչ ողորմութե̃՝ պարգևեա ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. ողորմեա:

Բարերար տր̃՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութե̃ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութե̃ այսոցն որ են 'ի ներքոյ

երկնից. ողորմեա ։

Լոյս ճշմարիտ քո̃՝ արժանաւորեա զհոգի իմ ուրախութե̃ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթևվանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո. ողորմեա ։

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. ողորմեա ։

Ամենողորմ տ̃ր՝ ողորմեա ա̃մ հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօ-

թից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն որ առիս յանցանաց, և դարձո զն̃ս 'ի չարեացն զոր ունին վ̃ս իմ, զի ողորմուե̃ քում արժանի եղիցին. ողոր։

Փառաւորեալ տ̃ր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա 'ի բարի զխնդրուածս իմ՝ բարեխօսուբ̃ սրբուհւոյ ա̃ծածնին, և յովհաննու մկրտչին, և սբ̃յն ստեփաննոսի նախավկային, և սբ̃յն գրիգորի մերոյ լուսաւորչին, և սբ̃ց առաքելոց՝ մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրոսաց, հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց, և ա̃մ սբ̃ց քոց երկնաւորաց և երկրաւորաց։

Եւ քեզ փառք և երկրպագուի̃

անբաժանելի ո՛բ երրորդուե՛դ- յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

## Աղօթք պահպանութեան ։

Անսկիզբն ա̃ծ՝ անեղ ա̃ծ՝ անիմանալի ա̃ծ՝ անպարագրելի ա̃ծ՝ անծին ա̃ծ՝ ամէնարքայ ա̃ծ՝ ամէնարարիչ ա̃ծ՝ ամէնարփի ա̃ծ՝ ամէնագէտ ա̃ծ՝ ամէնարագ ա̃ծ՝ ամէնառատ ա̃ծ՝ ամէնամեծ ա̃ծ՝ ամէնաղբիւր ա̃ծ՝ ամէնարմատ ա̃ծ՝ ամէնարձակ ա̃ծ՝ ամէնաայց ա̃ծ՝ ամէնայցելու ա̃ծ՝ ամէնագդու ա̃ծ՝ ամէնագդիչ ա̃ծ՝ ամէնաստաց ա̃ծ՝ ամէնարթուն ա̃ծ , ամէնաբաւ ա̃ծ՝ ամէնաբարձեալ

ա̃ծ՝ ամենաբերկրեալ ա̃ծ՝ ամե-
նաբաւ ա̃ծ՝ ամենաբաւական ա̃ծ՝
ամենաբարի ա̃ծ՝ ամենաբոյժ ա̃ծ՝
ամենաբուժիչ ա̃ծ՝ ամենաբուղխ
ա̃ծ՝ ամենաբաշխ ա̃ծ՝ ամենա-
բաշխօղ ա̃ծ, ամենագով ա̃ծ՝ ա-
մենագովելի ա̃ծ՝ ամենագովեալ
ա̃ծ՝ ամենագութ ա̃ծ՝ ամենա-
գթած ա̃ծ ամենադատիչ ա̃ծ՝ ամե-
նագանձ ա̃ծ՝ ամենագորով ա̃ծ,
ամենադատ ա̃ծ՝ ամենադատա-
ւոր ա̃ծ՝ ամենադաւանեալ ա̃ծ՝
ամենադիր ա̃ծ՝ ամենադարման
ա̃ծ՝ ամենադարմանիչ ա̃ծ, ամե-
նաեղերիչ ա̃ծ՝ ամենաերբ ա̃ծ,
ամենազօր ա̃ծ՝ ամենազօրեղ ա̃ծ՝
ամենազարդ ա̃ծ ամենազարդա-
րօղ ա̃ծ՝ ամենազարդարիչ ա̃ծ՝
ամենազեղ ա̃ծ՝ ամենափրկիչ ա̃ծ,

ամենաէն ա՟ծ՝ ամենաէարկ ա՟ծ՝ ամենաերկինք ա՟ծ՝ ամենաասուրբ ա՟ծ՝ ամենողորմ ա՟ծ՝ ամենամեծ ա՟ծ՝ ամենամաքուր ա՟ծ՝ ամենաընտրօղ ա՟ծ՝ ամենաընդունակ ա՟ծ՝ ամենաընդունօղ ա՟ծ՝ ամենաըղձումն ա՟ծ՝ ամենաթագ ա՟ծ՝ ամենաթագաւոր ա՟ծ՝ ամենաժառանգ ա՟ծ՝ ամենաիշխան ա՟ծ՝ ամենաիշխօղ ա՟ծ՝ ամենաիմաստ ա՟ծ՝ ամենաիրաւ ա՟ծ, ամենալոյս ա՟ծ՝ ամենալիր ա՟ծ՝ ամենալրումն ա՟ծ, ամենախնամ ա՟ծ՝ ամենախնամօղ ա՟ծ՝ ամենախօս ա՟ծ՝ ամենախրատ ա՟ծ՝ամենախորին ա՟ծ՝ ամենախորհուրդ ա՟ծ , ամենագթած ա՟ծ՝ ամենածագումն ա՟ծ՝ ամենագով ա՟ծ՝ ամենածաւալ ա՟ծ՝ ամենակալ ա՟ծ՝ ամենակարօղ

ամ՝ ամէնակեր ամ՝ ամէնակրօղ
ամ՝ ամէնակայծ ամ ամէնակա-
տար ամ՝ ամէնակոչ ամ ամէնա-
կէտ ամ՝ ամէնահաս ամ՝ ամէ-
նահասու ամ՝ ամէնահաստատ
ամ՝ ամենահաստատիչ ամ, ամէ-
նաձիր ամ՝ ամէնաձեռն ամ՝
ամէնաձեռնտու ամ՝ ամէնաղե-
կավար ամ՝ ամէնաղամբար ամ,
ամէնաճարակ ամ՝ ամէնաճառա-
գայթ ամ՝ ամէնաճշմարիտ ամ,
ամէնամեծ ամ՝ ամենամաքուր
ամ՝ ամէնամաքրիչ ամ՝ ամէնա-
մարդ ամ՝ ամէնամարգիչ ամ,
ամէնայար ամ՝ ամէնայարոյց ամ՝
ամէնայաւաջ ամ՝ ամէնայօրդոր
ամ՝ ամէնայօրդորիչ ամ՝ ամէ-
նայոյս ամ՝ ամէնակալ ամ՝ ամէ-
նալոյս ամ, ամէնաշարժ ամ՝

ամենաշուրջ ա̃ծ՝ ամէնաշահ ա̃ծ՝
ամենաշահաւոր ա̃ծ՝ ամենաշէն
ա̃ծ, ամենողորմ ա̃ծ՝ ամենաու-
ղորդ ա̃ծ՝ ամենաուղիղ ա̃ծ՝ ա-
մէնաուժեղ ա̃ծ՝ ամէնաոուոգ
ա̃ծ՝ ամենուրէք ա̃ծ՝ ամենագետ
ա̃ծ՝ ամենաչափօղ ա̃ծ, ամենա-
պատիւ ա̃ծ՝ ամենապարգեւ ա̃ծ՝
ամենասաստիչ ա̃ծ՝ ամենապարզ
ա̃ծ՝ ամենապարզիչ ա̃ծ՝ ամենա-
պահ ա̃ծ՝ ամենապահօղ ա̃ծ՝ ա-
մենապար ա̃ծ՝ ամենապարագրօղ
ա̃ծ՝ ամենապայծառ ա̃ծ՝ ամէնա-
պարոյր ա̃ծ, ամենաջահ ա̃ծ՝ ա-
մենաջան ա̃ծ՝ ամենաջամբ ա̃ծ՝
ամենալոյս ա̃ծ, ամէնաուսա ա̃ծ՝
ամենաուսուցիչ ա̃ծ, ամենա
սուրբ ա̃ծ՝ ամենասրբիչ ա̃ծ՝
ամենասահման ա̃ծ՝ ամենասահ-

մանիչ ած՝ ամենասասանձ ած՝ ա-
մենասասանձօղ ած՝ ամէնասփիւռ
ած՝ ամենասրբօղ ած, ամէնավար
ժիչ ած՝ ամենավարիչ աստուած՝
ամէնամաքրիչ աստուած՝ ամե-
նավայելուչ ած, ամենատար ած՝
ամենատիրօղ ած՝ ամենատեղ
ած՝ ամենատու ած՝ ամենատու-
օղ ած՝ ամէնատուն ած՝ ամէնա
տօն ած՝ ամենատես ած՝ ամենա
տեսուչ ած՝ ամենատիւ ած, ա-
մէնարբուն ած՝ ամենարամից
ած, ամէնացօղ ած՝ ամէնացայտ
ած՝ ամենացայդ ած՝ ամէնա-
ցնծուն ած՝ ամենացանկ ած՝ ա-
մէնացանկալի ած, ամէնափառք
ած՝ ամէնափայլ ած՝ ամէնափայ
լօղ ած՝ ամէնափայլեալ ած՝ ա-
մէնափայլիչ ած՝ ամէնափղթ ած՝

ամենափրկող ած՝ ամենափրկիչ
ած, ամենաքաւ ած՝ ամենաքաւ-
ւիչ ած՝ ամենաքաւող աստուած՝
ամենաքաւողիչ աստուած, ան-
ճառ ած՝ անճառարքայ ած՝ ան-
ճառարքայութի ած՝ անճառաղա-
տութի ած՝ անճառաղբիւր ած՝
անճառարարիչ ած՝ անճառապէ-
նիաղ ած՝ անճառարփի ած՝ ա-
մենաճառագայթ ած՝ անճառա-
հաւոր ած՝ անճառախոր ած՝
անճառաբարի ած՝ անճառաբեայ
ած՝ անճառաբուղխ ած՝ անճա-
ռագութ ած՝ անճառաղօր ած՝
անճառիմաստ ած՝ անճառաղուր
ած՝ անճառածագ ած՝ անճա-
ռագոյլ ած՝ անճառողորմ ած՝
անճառաչափ ած՝ անճառապա-
տիւ ած՝ անճառավէհ ած՝ ան-

Ճառագայթաւք ա͞ծ՝ անճառագայթայլ ա͞ծ, անախտ ա͞ծ՝ անեզր ա͞ծ՝ անեղծ ա͞ծ՝ անըմբռնելի ա͞ծ՝ անժամանակ ա͞ծ՝ անիմանալի ա͞ծ՝ անլուելի ա͞ծ՝ անխարդախ ա͞ծ՝ անծայր ա͞ծ՝ անկեղտ ա͞ծ՝ անհասանելի ա͞ծ՝ անղօղելի ա͞ծ՝ անմեկնելի ա͞ծ՝ անյիշաչար ա͞ծ՝ աննինջ ա͞ծ՝ անշարժ ա͞ծ՝ անոխակալ ա͞ծ՝ անչարչար ա͞ծ՝ անպատմելի ա͞ծ՝ անկոխելի ա͞ծ՝ աննեղելի ա͞ծ՝ անօրինակ ա͞ծ։

Բարի ա͞ծ՝ բարեմիտ ա͞ծ՝ բարի բնութ͞ի ա͞ծ՝ բարեաց բարի ա͞ծ՝ բարեգութ ա͞ծ՝ բարեբաշխ ա͞ծ՝ բարեբարոյ ա͞ծ՝ բարեխորհուրդ ա͞ծ՝ բարեաց պարգևօղ ա͞ծ՝ բարեսէր աստուած։

Գովեալ ա͞ծ՝ գերիվերոյ ա͞ծ՝

գերազօրդ ած՝ գոհաբանել ած՝ գերապանծ ած՝ գեղեցիկ ած՝ գերագոյն ած՝ գթացուցիչ ած։

Դատաւոր ած՝ դատաւորաց դէտ ած՝ դիտապետ ած՝ դասաւորիչ ած՝ դաւանել ած՝ դասուց վերնոց ած՝ դեղ կենաց ած՝ դը-րախտ ած՝ դաստիարակօղ ած։

Երրորդութիւն ած՝ երկինք աստուած՝ երկնաւորաց աստ-ուած՝ երկրաւորաց աստուած։

Զօրաւոր ած՝ զօրեղ ած՝ զուարթնոց ած՝ զարդարօղ ած՝ զարմանք ած՝ զարմանալի ած՝ զարհուրելի աստուած։

Էրրեակ և մի ած՝ էրանեալ ած՝ էական ած՝ էացուցիչ ած՝ էութիւն աստուած։

Թագաւորաց ած՝ Թաքեալ

ա̃ծ՝ Թողիչ մեղաց ա̃ծ՝ Թաղե-
լոց յարութի̃ աստուած՝ Թշնա-
մեաց սատակիչ աստուած ։

Ժառանգութի̃ ա̃ծ՝ ժամանե-
ալ աստուած՝ ժամանօղ ա̃ծ՝
ժամանակաց աստուած ։

Իսկզբանէ ա̃ծ՝ ինքնակամ ա̃ծ՝
ինքնագոյ ա̃ծ՝ ինքնակալ ա̃ծ՝
ինքնատար ա̃ծ՝ ինքնակարօղ ա̃ծ՝
ինքնիշխան ա̃ծ՝ իշխօղ ա̃ծ՝ 'ի
բարձունս ա̃ծ՝ իմանալի ա̃ծ ։

Լոյս ա̃ծ՝ լոյս անստուեր ա̃ծ՝
լոյս Թափանցիկ ա̃ծ՝ լուսազգեստ
ա̃ծ՝ լուսաւորիչ ա̃ծ՝ լուսազարդ
ա̃ծ՝ լուսատու ա̃ծ՝ լուսաձեմ
ա̃ծ՝ լսօղ ա̃ծ՝ լիութիւն ա̃ծ՝
լցուցիչ աստուած ։

Խոր անքննին ա̃ծ՝ խաղաղութի̃
ա̃ծ՝ խաղաղարար ա̃ծ՝ խնամօղ

ա̃ծ՝ խնամիչ ա̃ծ՝ խրատիչ ա̃ծ՝
խանդաղատօղ ա̃ծ՝ խորհուրդ-
ա̃ծ՝ խորհրդապետ ա̃ծ՝ խնդըր-
ուած ա̃ծ՝ խորհրդադէտ ա̃ծ՝
խնդրօղ ա̃ծ՝ խոնարհ աստուած՝
խորհրդադէտ աստուած ։

Ծագումն ա̃ծ՝ ծնօղ ա̃ծ՝ ծա
գօղ ա̃ծ՝ ծարաւելոց ա̃ծ՝ ծա-
նուցեալ ա̃ծ՝ ծանուցիչ ա̃ծ՝ ծա
ռայից տ̃ր ա̃ծ՝ ծածկատես ա̃ծ՝
ծածկագէտ ա̃ծ՝ ծայր ա̃ծ ։

Կենդանի ա̃ծ՝ կենդանարար
ա̃ծ՝ կենդանատու ա̃ծ՝ կենդա-
նացուցիչ ա̃ծ՝ կերակրօղ ա̃ծ՝
կամարար ա̃ծ՝ կեանք ա̃ծ՝ կամե
ցօղ բարեաց ա̃ծ՝ կենդանի ա̃ծ՝
կատարեալ ա̃ծ՝ կառավարօղ
ա̃ծ՝ կուրաց լուսատու ա̃ծ ։

Հայր ա̃ծ՝ հօր որդէ ա̃ծ՝ հո-

գի որ ես. ա̃ծ՝ հաւատ ա̃ծ՝ համերց լեզուատու ա̃ծ՝ հոգւոց ազատիչ ա̃ծ՝ հրածորան ա̃ծ՝ հրաւիրօղ ա̃ծ՝ հինաւուրց ա̃ծ՝ հարուստ ա̃ծ՝ հանուրց ա̃ծ՝ հաւատարիմ աստուած ։

Ձայն ա̃ծ՝ ձայնօղ ա̃ծ՝ ձեռնտու ա̃ծ՝ ձայնից լսօղ ա̃ծ՝ ձիր ա̃ծ՝ ձիրաբաշխ աստուած ։

Ղեկավար ա̃ծ՝ ղեկապետ աստուած՝ ղամպար աստուած ։

Ճշմարիտ ա̃ծ՝ ճշմարտութիւն ա̃ծ՝ ճըշմարտասէր ա̃ծ՝ ճարտարապետ ա̃ծ՝ ճառագայթ ա̃ծ՝ ճառագայթեալ ա̃ծ՝ ճոխ ա̃ծ՝ ճաշակ ա̃ծ՝ ճար ա̃ծ՝ ճոռոմ ա̃ծ՝ ճանապարհ ա̃ծ՝ ճանապարհ կենաց ա̃ծ՝ ճանապարհ բարեաց աստուած՝ ճառ աստուած ։

Մեծարեալ ած՝ մեծապա-
տիւ ած՝ մաքրիչ ած՝ մաքրութի̃
ած՝ մաքրող ած՝ մահու լուծա-
նող ած՝ մեղաւորաց դարձ ած։

Յայտնութի̃ ած՝ յաւիտեան
ած՝ յաւիտենից ած՝ յարութի̃
ած՝ յուսացելոց ած՝ յուսադրող
ած՝ յարուցիչ ած՝ յառաջ ած՝
յանդիման աստուած։

Ներելոց լոյս ած՝ նորահրաշ
ած՝ նաւապետ բարի աստուած։

Շնորհ ած՝ շնորհատու ած՝
շուրջ ած՝ շուրջանակի ած՝ շը-
նորհօղ ած՝ շնորհաբեր աստ-
ուած՝ շաւիղ աստուած։

Ողորմած ած՝ ողորմութի̃ ած՝
ուղիղ ած՝ ուղղորդ ած՝ ուղ-
ղորդանէր ած՝ ուղղորդապետ
աստուած՝ ուղղորդախօս ած՝

ուղղորդաբան աստուած ։

Չարատեաց ա՟ծ՝ չարասաստ ա՟ծ՝ չարամերժ ա՟ծ՝ չարաբարձ ա՟ծ՝ չարահերձ, աստուած՝ չարակործան աստուած ։

Պահապան ա՟ծ՝ պահպանիչ ա՟ծ՝ պետ ա՟ծ՝ պետական ա՟ծ՝ պատուելի աստուած՝ պարունակող աստուած ։

Ջահ ա՟ծ՝ ջահալոյս ա՟ծ՝ ջահապայծառ ա՟ծ՝ ջան ա՟ծ՝ ջամբող ա՟ծ՝ ջերմեռանդութ՟ի ա՟ծ ։

Ռահ ա՟ծ՝ ռահ լոյս ա՟ծ՝ ռատաբաշխ ա՟ծ՝ ռատափայլ ա՟ծ՝ ռետին քաղցր աստուած՝ ռահավարժ աստուած ։

Սէ ա՟ծ՝ սրբու՟ի ա՟ծ՝ սաբաւովդ ա՟ծ՝ սէր ա՟ծ՝ սիրելի ա՟ծ՝ սահմանադիր աստուած՝ ստեղ-

ծօղ աստուած՝ սրբոց աստուած՝ սոսկալի աստուած ։

Վեհ ա̃ծ՝ վեհագոյն ա̃ծ՝ վայելչուն ա̃ծ՝ վերակացու ա̃ծ՝ վարժիչ աստուած ։

Տէր ա̃ծ՝ տեսօղ ա̃ծ՝ տիւ աստուած՝ տուիչ բարեաց աստուած՝ տրտմեցելոց աստուած ։

Րաբուն աստուած՝ րաբունապետ աստուած՝ րախարար աստուած ։

Ցնծութի̃ն աստուած՝ ցանկալի աստուած՝ ցաւոց բժիշկ աստուած՝ ցօղահոս աստուած ։

Փառք աստուած՝ փառաւորեալ ա̃ծ՝ փառահեղ ա̃ծ՝ փառաբանեալ ա̃ծ՝ փրկիչ աստուած՝ փրկօղ աստուած՝ փարթամ ա̃ծ՝ փարատիչ ցաւոց աստուած՝ փա-

ւաղօր աստուած՝ փառք ՚ի բարձունս աստուած։

Քահանայապետ աստուած՝ քերոբէանիստ աստուած՝ քաւիչ աստուած՝ քաւութ աստուած՝ քաւարան աստուած՝ քարոզիչ աստուած՝ քննօղ աստուած։

Օրէնք աստուած՝ օրինադիր աստուած՝ օրհնիչ աստուած՝ օրհնեալ աստուած՝ օրհնաբանեալ աստուած։

Ո՛ սուրբ և ահեղ անուանցդ զօրութեամբ՝ տէր աստուած ամենակալ եղիցի պահպան ծառայիս։

## Աղօթք վասն կապանաց դիւաց և կախարդաց աղանդաւորաց ։

Թագաւոր հզօր ապաւէն ծարաւելոց՝ փրկիչ նեղելոց՝ որ վ՟ն մեր խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ և առեր մարմին 'ի ս՟բյ կուսէն մարիամայ ․ վ՟ն մերոյ փրկու՟է մատնեցար, ըմբռնեցար, չարչարեցար, խաչեցար, թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր ։ Զարթո՛ զզօրութի՟ քո և եկ 'ի կեցուցանել զգինս արեան քյ ո՟ր ․ և մի՛ տար գերել սատանայի զքո փրկեալքս, և մի՛ տար բնակութի՟ չարին՝ զտաճար անուանդ քում

ն̃ըյ · այլ գթա՛ ’ի քո արարածս արարչական սիրով քո, և ողորմեա՛ մեզ, զի ’ի խաչ քո պարծելով պարծեցաք · և փրկեա՛ զմեզ յաներևոյթ չար դժնդակ դիւաց, և ’ի խաբեբայ եղեռնական գործոց կախարդաց · և քեզ փառք յաւիտեանս, ամէն ։

Չար իշխանքն հալածին, որք ընդ ծառայս քո մարտնչին · երևելով նշան խաչին, աներևոյթքն կործանեսցին ։

Ս̃է աւետարանն՝ որ ըստ Մատթէոսի

Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն յ̃ո, զհետ եղեն Նորա կոյրք երկու, աղաղակէին՝ և ասէին ·

ողորմեա՛ց մեզ որդի՛ դաւթի ։
Եւ իբրեւ եկն ՚ի տուն, մատեան
առ նա կոյրքն · և ասէ ցն̃ս յս̃ ·
հաւատա՞յք՝ եթէ կարող եմ առ-
նել զեզ զայդ · ասեն ցնա՝ այո՛
տր̃ ։ Յայնժամ մերձեցաւ յաչս
նց̃՝ և ասէ · ըստ հաւատոց ձերոց
եղիցի ձեզ ։ Եւ բացան աչք
նց̃ · և սաստեաց նց̃ յս̃՝ և ասէ ·
զգո՛յշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ ։
Եւ նոքա ելեալ համբաւեցին
զնա ընդ ամ̃ երկիրն ընդ այն ։
Եւ յելանելն նց̃ արտաքս, ահա
մատուցին առ նա այր մի՝ համր
դիւահար ։ Եւ յելանել դիւին՝
խօսեցաւ համրն · և զարմացան
ժողովուրդքն՝ և ասեն · թէ և
ո՛չ երբէք երևեցաւ այսպիսի
ինչ յիսրայէլի ։ Իսկ փարիսե-

ցէքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։

---

Սբ̃ աւետարանն՝ որ ըստ Մարկոսի։

Եւ ել լուր նո̃ր ընդ ա̃մ կողմն գալիլեացւոց։ Եւ վաղվաղակի ելեալ ՚ի ժողովրդենէն, եկն ՚ի տուն սիմոնի և անդրեայ՝ յակոբաւ և յովհաննու հանդերձ։ Եւ զոքանչ սիմոնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վ̃ն նորա։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նո̃ր, և եթող զնա տենդն՝ և պաշտէր զն̃ս։ Եւ իբրև երեկոյ եղև ՚ի մտանել արեգականն, բերէին առ նա զա̃մ հիւանդս և զդիւա

հարս • և էր ամ̃ քաղաքն ժողովեալ առ դրունսն: Եւ բժշկեաց բազում հիւանդս ՚ի պէս պէս ախտից, և դևս բազումս եհան • և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ քն̃ն է:

—

Մէ̃ աւետարանն՝ որ ըստ Ղուկասու:

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ՚ի լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն ՚ի գլուխ յաղօթսն այ̃: Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց ՚ի նոցանէ երկոտասանս • զորս և առաքեալս անուանեաց: Զսիմոն՝ զոր և պետրոս անուանեաց, և զանդրէ

աս զեղբայր նորին, և զյակովբոս և զյովհաննէս, և զփիլիպպոս և զբարդուղիմէոս · և զմատթէոս և զթովմաս, և զյակովբոս ալփեայ, և զսիմոն զկոչեցեալն նախանձայոյզ · և զյուդայ յակովբայ, և զյուդա իսկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ ։ Եւ իջեալ նոքօք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ · և ժողով աշակերտացն նր̃՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամ̃ հրէաստանէ և յերուսաղէմէ՝ և յայնմ կողմանէ՝ և ՚ի ծովեզերէն տիւրոսի և սիդոնի · որ եկին լսել ՚ի նմանէ՝ և բժշկել ՚ի հիւանդութեն̃ իւրեանց · և նեղեալքն յայսոց պղծծոց բժշկէին ։ Եւ ամ̃ ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի

նա, զի զօրութ՟ի բազում ելանէր ՚ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին:

—

Մէ՟ աւետարանս՝ որ ըստ Յովհաննու:

Յետ այսորիկ տօնէր հրէից. և ել յս՟ յերուսաղէմ: Եւ էր յերուսաղէմ ՚ի պրոբատիկէ աւազանին. որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդա, հինգ սրահ: Յորս անկեալ դնէր բազմութ՟ի յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ: Եւ հրեշտակ տ՟ն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ոչ ունելով նշան

հիւանդութ՟։ Իսկ անդ էր այր
մի, որոյ երեսուն և ութ ամ էր
ի հիւանդութ՟ իւրում։ Զնա
իբրև ետես Յս՟ զի անկեալ դը-
նէր, և գիտաց եթէ բազում
ժամանակք են այնուհետև, ասէ
ցնա. կամիս ողջ լինել։ Պատաս
խանի ետ նմա հիւանդն. տէ՛ր՝
ո՛չ զոք ունիմ, թէ յորժամ ջուր
քըն յուզիցին՝ արկցէ զիս յա-
ւազանն. և մինչ ես դանդաղիմ,
այլ ոք քան զիս յառաջագոյն ի-
ջանէ։ Ասէ ցնա Յս՟. արի՛ առ
զմահիճս քո՝ և գնա՛։ Իսկ ողջա-
ցաւ այրն, և յարեաւ՝ առ զմա-
հիճս իւր՝ և շրջէր. և էր շա-
բաթ յաւուրն յայնմիկ։

## Պատմութ՟ վարուց՝ ընդ նմին և աղօթք Կիպրիանոսի հայրապետին:

Ես Կիպրիանոս ծառայ ա՟յ՝ յանտիոք քաղաքէ՝ ազգաւ հելլենացի առն հեթանոսի որդի, անուն հօր իմոյ եդեսիա, և մօր իմոյ կղօդիա: Յորժամ ծնայ ես յորովայնէ մօր իմոյ, ծնողքն իմ նուիրեցին զիս յուսումն չա՟ծոց՝ լինիլ պաշտօնեայ կռոցն. և ետուն զիս յուսումն գիտութ՟ե, և զա՟մ ուսայ զկախարդական գիրս առաւել քան զսիմոն և զնաքովր, և եղէ հասու ա՟մ հնարագիտութ՟ցն. բազում անգամ եջանէի ՚ի յօդն և կախարդութ՟ գնայի ՚ի վ՟ր ծովուն. և էի ՚ի հրամանս իմ ա՟մ դունդք դիւաց. և զոր ինչ խորհէի, առ

ժամայն կատարէին փողփողակի։

Նշլանէի յապարանսն և տու-
նէի պշուխղս արեգականն և ըղ
լուսին յերեսս իմ, և երեսք իմ
փայլէին իբրև զարեգակն, և կա-
տարէի զկամս դիւացն մեծա-
ուրախութ̃բ, և էի մոլորեալ ՚ի
գործս չարութ̃ե և ոչ ճանաչէի
զԱ̃ծ, և զամենեսեան զայթակ-
ղեցուցանէի յաղագս չար ար-
ուեստին իմոյ։

Զոմանս աչաց ցաւ առնէի. զոմանս գըլխացաւ առնէի. զո-
մանս քամոտ առնէի. զոմանս
ջերմոտ առնէի. զոմանս հի-
ւանդ առնէի. զոմանս յորդւոց
վարէի. զոմանց պտղն յերեսացն
առնէի. զոմանց զմիտքն մոլորե-
ցուցանէի. զոմանս ատելի ու-

նէի իւր ազգին։ Օ՜ այր և ըղ-
կլին կռուեցնէի և աւել տայի
զծիմեանս, և այլ բազում չարիս
դիւականս առնէի 'ի վ՟ր երկրի։

Եւ այնչափ հմուտ եղէ դի-
ւացն՝ որ ոչ մնաց գործ և ոչ
խորհուրդ զոր ես ոչ գիտացի.
գիտացի և զբազմութի՟ դիւաց զի
ո՟պ ջուր որ ելանէ յաղբերացն,
այնպէս ելանէին դևքն և պատ-
րէին և խաբէին զորդիս մարդ-
կան. զոր տէր աստուած հե-
ռացուցէ 'ի ծառայէս ի՟յ։

Եւ կապէի կախարդութ՟բ իմով
զերկինս՝ որ ոչ տայր զանձրև.
զերկիր՝ որ ոչ բուսուցանէր ըղ
սերմանիս իւր. զարեգակն և ըղ
լուսինն և զաստեղս հաստատու-
թ՟բ. զծառս՝ որ ոչ տայր ըղ-

պտուղս իւր . զծով՝ որ ոչ տայր
զալիս իւր . զձկունս՝ որ ոչ լո-
ղային 'ի ծովս . զգետս՝ որ ոչ
գնային . զաղբիւրս՝ որ ոչ բըղ-
խէին . զթռչունս՝ որ ոչ վերանայ
ին յօդս . զանասունս՝ որ ոչ յը-
ղանային . զայրս՝ որ ոչ ծնանէ-
ին . զկանայս՝ որ ոչ յղանային .
զեռունս՝ որ ոչ զեռային . զվաս
տակաւորս՝ որ ոչ վաստակէին .
զվաճառականս՝ որ ոչ վաճառէ-
ին : Օդն՝ որ ոչ թնդայր ,
և կայէր զերկիրս օդօքն և զեր-
կիր ա̃մ զեռնօք , որ ոչ անցանէ-
ին ընդ հրամանս իմ . ռձհթ . ա-
ղանդք կանանց և կախարդաց ,
և արանց աղանդաւորաց :

Արձակ երիտասարդ մի որոյ
անունն Ադաւլիդոս՝ գեղեցիկ

կուսի մի ցանկացաւ որոյ անունն էր յուստինանէ , առնուլ զնա 'ի կնութի և ոչ կարէր , և առաքեաց բազում պատուական ինչս՝ ոսկի և արծաթ և գեղեցիկ հանդերձըս . և կոյսն ոչ հաւանեցաւ և դարձոյց անարգանօք . և առեալ երիտասարդն զամ ինչսն գնաց առ կիպրիանոս . և նա ասէ՝ ես դարձուցանեմ զնա 'ի կամս քո , և առաքեաց զմի 'ի դիւացն առ յուստինանէ , և նա սբ աղօթիւքն հալածեաց զնա , և ապա առաքեաց զդեւն պոռնկութե , և եղեալ դիւին 'ի կերպարանս ծեր և պառաւ կնոջ , և գնացեալ 'ի դուռն սբ կուսին 'ի գիշերի և ասէ՝ ո՞վ դստրիկ իմ՝ զգիշերս ամ քեզ աղօթեցիր , և մտեալ դեւն առ

կոյսն , աղօթեցին զողջ գիշերն միաբան ։

Եւ ապա ասէ սատանայ՝ ո՞վ դուստրակ ՚ի կուսութէ՞ ո՞վ է վարձն ընկալեալ։ Եւս թէ չէր ամուսնացեալ , ուստի՞ էին նախահայրքն՝ մարգարէքն՝ առաքեալքն՝ հայրապետքն ․ ե՛կ երթիցուք առ մեծն Կիպրիանոս և ամուսնացիր ․ և այսպ խմացեալ կոյսն որ սքանչականն էր բանին , եհան զնշան խաչին ՚ի վ͞ր մարմնոյ իւրոյ և կնքեաց զինքն ․ և դևն հալածեցաւ և աներևոյթ եղև ահիւ և դողութե՞ և գնաց առ Կիպրիանոս ։

Եւ Կիպրիանոս ասէ ցդևն՝ զի՞նչ է որ երկիւղիւ դողաս և սասանիս ․ ասէ դևն , տեսի ըղ-

նշան խաչին և երկիւղիւ դողամ
և սասանիմ • ասէ կիպրիանոս՝
զինչ է նշան խաչին որ զարհու-
րեցուցանէ զքեզ ։ Ասէ դևն՝
ցկիպրիանոս • երդուիր որ ոչ
ուրանաս զմեզ, ես ասեմ քեզ
զա̃մ խորհուրդս մեր և զնշան
խաչին • և երդուաւ կիպրիանոս
'ի սուտ և 'ի սնոտի պաշտամունս
նոցա՝ եթէ ոչ ուրանամ զձեզ ։
Ու սկսաւ դևն պատմել մի ըստ
միոջէ զա̃մ և ասէ • Ա̃ծ զմարդ-
ստեղծ 'ի հողոյ զադամ, և ասաց
եկայք հրեշտակք և հրեշտակա-
պետք երկիր պագէք ձեռագոր-
ծին իմոյ ադամայ • նա դասքն
սատանայէլի հպարտացան, և ոչ
խոնարհեցան երկիր պագանել
ադամայ • բարկացաւ Ա̃ծութին

և զերկինքն պատառեաց և զսա-
դայէլն դասն 'ի վայր ելից զան-
թիւ զօրս մեր. և շինեցաք ապա-
րանս և դժոխք անուանեցաք,
և զհոգիս արդարոց և մեղաւո-
րաց մինչև ցյօհաննէս մկրտիչն
զա՟մ ըմբռնեցաք և 'ի դժոխս ա-
ծաք: Յետոյ առաքեաց ա՟ծ զոր-
դին իւր միածին որ եկն և ծնաւ
'ի ս՟բ կուսէն մարիամայ ա՟ծած-
նէն, զմեռեալս յարոյց. զբոր-
տս սրբեաց. զկաղս գնացոյց.
զկոյրս լուսաւորեաց. և այլ բա-
զում սքանչելիս արար: Մա-
նեցաւ 'ի յուդայէ և խաչեցաւ
'ի հրէից և թաղեցաւ, և յարեաւ
'ի մեռելոց, և խաչիւն իւրով
զդժոխս աւերեաց. և համբար-
ձաւ առ հայր յերկինս, և գալոց

է միաբանգամ դատել զկենդա-
նիս և զմեռեալս. և խաչիւն իւ-
րով լուսաւորէ զա՟մ արարածս:
Հաւատացեալքն ուրախանան և
ուրացողքն կոծեցին: Այս է
նշան խաչին զոր տեսանեմք և
զարհուրիմք և սոսկամք. և ապա
կիպրիանոս 'ի միտս իւր եկեալ
ասէ, թէ նշան խաչին այդչափ
զօրութի՟ ունի, ապա խաչեալն
որչափ ևս առաւել: Եւ հաւա-
տամ 'ի քս՟, և 'ի զօրութե՟ խաչին,
և յա՟ծ հայր ամենակալ՝ զի նա՛
միայն է ճշմարիտ ա՟ծ, և կուռքն
դևքն են և սատանայ:

Եւ ապա այրեաց զա՟մ գիրս
կախարդութե՟ իւրոյ, և գնաց առ
եպիսկոպոս քաղաքին, և մկրտե-
ցաւ և ձեռնադրեցաւ քահա-

նայ , և զկնի աւուրց՝ եպիսկո-
պոս . և աղօթեաց և ասէ՝ տէ՛ր
ա̃ծ իմ սիրեցի զքեզ և ծանեայ
՚ի ձեռն ս̃բ հայրապետին մատ-
թէոսի և յուստինանէ կուսին
զզօրութի̃ խաչի քո , ողորմած ա̃ծ
ողորմեա՛ ինձ որ̃պ աւազակին .
քաւեա՛ զիս ո̃պ զզաքէոսն . ար-
դարացո՛ զիս որ̃պ զմաքսաւորն .
հա՛ն զիս ՚ի գբոյ մեղաց՝ ո̃պ զե-
րեմիա և զդանիէլ ՚ի գբոյ բան-
տին . շիջո՛ յինէն զբոցու̃ թըշ-
նամւոյն՝ ո̃պ զհնոցին երից ման-
կանց ՚ի բաբելոնի հողմաբեր
ցօղո̃վ օրհնութեան ։

Եւ զոր յառաջն կապէր չար
և դիւական աղանդօքն , այժմ ար-
ձակե՛լ եմ զա̃մ կապեալսն հրամա
նաւն ա̃յ . կացցեն երկինք և երկիր

՚ի հաստատուն իւրեանց · հող՝
զբոյս դալար բուսուցանէ ·
ծառք՝ զպտուղս իւրեանց տան ·
և ա̃մ կապեալքն՝ արձակումն
առցեն յանուն ամենաս̃բ եր-
րորդութեանն աստուծոյ ։

Երդմնեցուցանեմ զքեզ սա-
տանայ՝ անուամբն ա̃յ յ̃ի ք̃ի տ̃ն
մերոյ · և ՚ի ռ̃ և ա̃ անունն ա̃յ՝
որ զադամն և զեւա բաղկացոյց ·
և յիննն դասս հրեշտակացն՝ որ
ելանեն և իջանեն ՚ի տալլիպօլիս
քաղաքն · և յանուն սերովբէ-
իցն՝ որ կան ՚ի սպասաւորութ̃ի
որդւոյն ա̃յ , և թևաքօղելով
ծածկեն զերեսս իւրեանց և եր-
գեն , ս̃բ՝ ս̃բ՝ ս̃բ՝ տ̃ր զօրութ̃եց՝
լի են երկինք և երկիր փառօք քո ։

Երդմնեցուցանեմ զձեզ՝ չար

դէք և որդիք սղնայի՝ որ էք օգ-
նական ամ՟ կախարդաց և չարա-
գործաց․ երդմնեցուցանեմ զձեզ
սղնայք՝ ’ի գեղեցկութի՟ն ադա-
մայ․ ’ի վայելչութի՟ն դրախտին․ ’ի
խոնարհութի՟ն ամ՟ ո՟րց․ և ’ի սէր
ամ՟ մարտիրոսացն․ ’ի պատարագն
աբելի․ ’ի կոչումն զանուն ա՟ն
ենովսայ․ ’ի յարդարութի՟ն նոյի․
’ի քահանայութի՟ն մելքիսեդեկի․
’ի հաւատս և ’ի հիւրընկալութի՟ն
աբրահամու․ ’ի կապանսն սահա
կայ․ ’ի պատրանսն յակովբայ․ ’ի
գեղեցկութի՟ն յովսեփայ․ ’ի համ-
բարձումն եղիայի․ ’ի հնազան-
դութի՟ն եղիսէի․ ’ի տախտակն
մովսէսի․ ’ի պատմուճանն ահա-
րօնի, որ զարդարեալ էր երկո-
տասան ականքք՝ որ օրինակ էր

երկոտասան առաքելոցն ք̃ի ․ ՚ի
քնարն և ՚ի սաղմոսն դաւթի ․ ՚ի
մատանին սողոմոնի ․ ՚ի գաւազա-
նըն մովսէսի , և յաղօթսն ահա-
րոնի ․ յաւետիքն գաբրիէլի՝
զոր ետ ո̃ը կուսին մարիամու ․ ՚ի
ծնունդն և ՚ի մկրտութ̃ին յ̃ի ք̃ի՝
որ մկրտեցաւ ՚ի յորդանան ՚ի
յովհաննէ ․ և ՚ի ո̃ը հրամանքն որ
հրամայեաց անդամալուծին թէ՝
արի́ առ զմահիճս քո ․ և ՚ի թուքն
որ եբաց զաչս կուրին ․ և ՚ի գա-
լուստն յաւանակաւ յերուսա-
ղէմ ․ ՚ի յարութ̃ին ղազարու ․ ՚ի
մատնութ̃ին և ՚ի խաչելութ̃ին ք̃ի ․ ՚ի
գեղարդն և ՚ի բևեռն ք̃ի ․ ՚ի փշէ
ղէն պսակն և ՚ի հեղումն արեան
որդւոյն ա̃յ՝ որ հեղաւ ՚ի վերայ
սուրբ խաչին ։

Երդմնեցուցանեմ և կապեմ և հալածեմ զձեզ չար դևք՝ յարուԹենէն և համբարձմանէն քո, և՚ի գալստենէն հոգւոյն սբյ, և այլակերպուԹենէն քո՝ որ այլակերպեցաւ ՚ի Թաբօր լերինն. ոչ ունիք իշխանուի դևք և աղանդք և կախարդուԹիք արանց և կանանց մերձենալ ՚ի ծառայս այ։

Երդմնեցուցանեմ զձեզ ՚ի բանն անծախելի, ՚ի լոյսն անճառելի. ՚ի Թագն անպատմելի, ՚ի Թագաւորն սոսկալի. ՚ի մատանին սողոմոնի. ՚ի տախտակն մովսէսի. ՚ի յաղօԹս ահարօնի. ՚ի քառասնօրեայ պահս մովսէսի. ՚ի սբ արիւնն մանկանց բեԹլեհէմի. ՚ի յարդարուին նոյի. ՚ի հաւատան ղովտի. ՚ի կարգն

մելքիսեդեկի ՝ ’ի յաւիտեան
գաբրիէլի ՝ ’ի յալթուն չորեք
կուսի ՝ մինն մարդոյ էր նմանի
և իմաստուն բանականի ՝ մինն
կերպ էր առիւծի, տեսիլն հուր
կիզելի ՝ մինն ահեղ և սքանչելի,
տեսիլն հրեղէն եզին ունի ՝
միւսն թև արծուի, ահեղ տե-
սիլ զարմանալի, որ ’ի վ̃ր նըստ-
եալ բազմի տէր և ա̃ծ ա̃մի ։

Ուր այս անուանքս ս̃բ յիշես-
ցին՝ գիրս և հրամանս պատա-
հի, չարն ’ի բաց միշտ հալածի,
կապք և աղանդք լուծանին ’ի
ծառայէս ա̃յ ։

Ցոյց մեզ տէր զողորմութիւնս քո
և զփրկութիւնս քո տուր մեզ։
Որպէս զի մեծ են գործք քո տէր
և յոյժ խոր են խորհուրդք քո ։

Աղօթք սրբոյն Բարսղի հայրապետին՝ վասն գիւտահարաց։

Ա՟ծ ա՟ծոց և տ՟ր տէրանց՝ ա-րարիչ աննիւթական զօրաց հրե-ղինաց, և ա՟մ երկնայնոց և երկ-րայնոց արուեստագործ։

Դու ես՝ որ զապստամբն ա-ռաջին զվտարանջեալն ՚ի քումմէ ապաստաւորուէ՟՝ յերկիր կործա-նեցեր. և զհրեշտակս յանցուց-եալս՝ զհաղորդակիցս ապստամ-բութե՟ն ն՟ր, յանդունդս խա-ւարի առաքեցեր։

Դու ահաւոր ես, և ո՛վ կարէ կալ առաջի քո. ՚ի քէն դողան ա՟մ արարածք երկնայինք և երկ-րաւորք, և յահէ փառաց զօ-րութե՟ն քո սասանին։

Սաստեա՛ իշխանին չարութե՟ն

և ամ՟ բանակի նր՟, որք անկան
ընդ նմա 'ի լուսեղէն յարկացն
վերին · որպ՟ զի զարհուրեսցի
յերդմանէս յայսմանէ՝ զոր երդ-
մնեցուցանեմ յանուն քո, և
փախիցէ յանհուն հեռաստան
անդառնալի գնացիւք ։

Հրամայեա՛ սմա և զօրաց սո-
րին 'ի բաց մեկնիլ 'ի ծառայէս
յայսմանէ · և խապառ հալածեա՛
զնս՟, զի մի՛ վնասեսցեն կնքեալ
պատկերի քո · այլ կնքեալքս այ
սոքիկ զօրացե՟լ ահւոր անուամբ-
քով սրբով, կոխեսցեն զօձս և զկա
րիճս և զամ՟ զօրութիս՟ թշնամւոյն ։

Որպ՟ զի յամ՟ բերանոյ օրհնես-
ցի և գովեսցի և փառաւորեսցի
ամենասուրբ անուն հօր և որդւոյ
և հոգւոյն սբյ՟, այժմ և միշտ և ։



Աղօթք երանելւոյն Յովհաննու դաւ-
նեցւոյ ասացեալ առ ս̃բ ա̃ծածինն:

Ա̃ծածին մայր ք̃ի և ծնօղ միածնի հօր, բարձօղ անիծից՝ և պարծանք ազգի մարդկան: Յերկնային զօրացն երանեալ և հողեղինացս օրհնաբանեալ. միջնորդ ա̃յ և մարդկան. հաշտարար ընդ արարածս. թագ և պսակ կուսից և համարձակ բարեխօս վասն մեղաւորաց:

Մեղուցեալս ա̃մի՝ անկանիմ առաջի քո, և աղաչեմ զքեզ՝ իբրև զնոյն ինքն զմարմնացեալն ՚ի քէն, բարեխօսեա՛ վ̃ն իմ առ բանն ա̃ծ՝ զոր ծնար մարմնով,

զոր կերակրեցեր զկերակրիչն ամենայն կենդանեաց ։

Րզաչեա՛ վն մեր զանդրանիկդ քո ․ կա՛ց կանգուն առաջի նորա ցուցմամբ ոք սուեանցդ ․ կացո՛ առաջի նր միջնորդ և բարեխօս զմանկուն իւր ։ Օ կաթամբ սնանիլն ոչ մանուկ ․ զուսովդ բառնիլն ․ զգրկօք գգուելն ․ զշրթամբք համբուրիլն ․ զողջագուրիլն ոչ տղայ ․ զերթ և զեկն քո ընդ նմա յեգիպտոս՝ և ՚ի նազարէթ և յամ տեղիս ․ զտրտմութիւն տագնապիլն քո վն նր ՚ի ժամ չարչարանացն ․ զյանձնարարուն քո առ յովհաննէս, յորժամ հեղուսեալ կայր վըշտօք ՚ի վերայ խաչին ։ Օ գառն արտասուսն քո՝ զոր վտանկօրէն

հեղուխը՝ յործամ տեսանէիր
զնա վտանգեալ 'ի վը՟ խաչին · վս՟
որոյ մանտատատան տառապէիր
կսկծակոծ՝ վս՟ չարչարանացն ,
վս՟ սաստիկ ծարաւմանն , վս՟ ձա
շակման լեղւոյն՝ քացախին , վս՟
տեսանելոյն գքրտնատեսակ ար-
եան իջումն , վս՟ իջուցանելոյն
'ի խաչէն արխնաղանգ մարմ-
նոյն , վս՟ դխաղարդեալ դնելոյն
'ի սուրբ գերեզմանն ։

Ողաչեմ զքեզ մայր լուսոյ ,
հայցեա զթողութ՟ մեղաւորիս ։
Դիր աղերս առաջի Նր՟ զամենա
կիրս չարչարանաց իւրոց , զոր
վս՟ իմ կրեաց բարերարն և մար
դասէրն ։ { } իշեցո՛ ըբ՟ կոյս՝ զայս-
քան չարչարանացն · զի թերևս
ողորմեսցի և ներեսցէ բազմա-

մեղիս, և ջնջեսցէ զձեռագիր
խմոց յանցանաց։ Եւ իւր ան-
մեղ մատամբն և ս̃բ արեամբն
դրոշմեսցէ զգերեալս՝ 'ի դըպ-
րութիւն կենացն անվախճանից
ընդ ամ̃ սուրբս իւր։ Եւ քեզ
աղերս 'ի մեղուցեալ ոգւոյս՝ ա-
մենասուրբ կոյս բարեխօս լեր
ծառայիս ա̃յ։

## Աղօթք Մեսրոպայ վարդապետին՝ վ̃ն ճանապարհի։

Առաջնորդ կենաց և ճանա-
պարհ ճշմարտութե̃ տէր մեր յս̃
ք̃ս, որ առաջնորդեցեր յովսե-
փու յեգիպտոս, և իսրայելաց-
ւոցն ընդ ծովն կարմիր, և մով-

մէսն 'ի լեառն սինէական, և ժո
ղովրդեանն յերկիրն պարգևաց,
և կղէօպեանցն ճանապարհակից
եղեր յէմմաւուս:

Աղաչեմ զքեզ տէր՝ առաջ-
նորդեա ինձ և եղբարց իմոց
գնալ խաղաղութ̅բ զառաջիկայ
ընթացս. փրկեա յերևելի և յա
ներևոյթ թշնամւոյն. և բարի ա-
ռաջնորդեա 'ի դէմ եդե̅լ տեղին.
զի դու ես ճանապարհ և ճշմար
տութի̅ և կեանք մեր, այժմ և":

Աղօթք՝ յորժամ յորոգայթ անկանի
ոք, ասացեալ է սրբոյն Գրիգորի մե-
րոյ լուսաւորչին:

Օրհնեալ է մարդասիրութի̅
քո տէր իմ և փրկիչ յս̅ քս̅,

ընդէր լքանես զիս • դու միայն
ես ամենակարող • և անուն քո
զանոխակալութի̃ և զմարդասիրու-
թի̃ ցուցանէ • գթա՛ յիս՝ վ̃ զի
դու ես միայն մարդասէր: Ո՛ղ-
րեցո՛ զիս զանկեալս ՚ի մեղս • զի
դու ես միայն տուսանց մեղաց:
Հա՛ն զիս ՚ի տղմոյ անօրէնութե̃
իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտ-
եանս յաւիտենից: Փրկեա՛ զիս
՚ի գաղանի որսողէն • քանզի
ահա՛ իբրև զառիւծ գոչէ և
մինչէ կամելով կլանել զիս:

Ա՛րդ տէ՛ր իմ փայլատակեա՛
զփայլատակունս քո և կործան-
եա՛ զզօրութի̃ նորա, երկիցէ և
խաւարեսցի յերեսաց քոց •
քանզի անկա՛ր է և ո՛չ ունի զօ-
րութի̃ կալ առաջի քո, և ո՛չ

առաջի երեսաց սիրողաց քոց ։ Տեսանէ զզօրու̃ի նշանի խաչի քո տէր՝ և զարհուրի․ և ամաչելով՝ ՚ի բաց հեռանայ յայնցանէ՝ որք կարդան առ քեզ ։

Այժմ տէ՛ր՝ կեցո՛ և ապրեցո՛ զիս, վասն զի ՚ի քեզ ապաւինեցայ․ հա՛ն ՚ի նեղութէ զանձն իմ, զի մի՛ իսպառ կորուսցէ զիս նենգաւորն՝ որ մարտնչի ընդ իս ծածուկ հնարիւք ։

Որ խորհրդոց ես տ̃ր, և քըննես զսիրտս և զերիկամունս, սրբեա՛ զսիրտ իմ և զխորհուրդըս ՚ի զազիր և ՚ի պիղծ խորհրդոց․ զի մի՛ իսպառ կորեայց ՚ի յաւիտենական կորուստն ։

Որ կարօղդ ես ա̃մի, ողորմեա՛ ինձ ա̃ծ իմ․ տո՛ւր շնորհ ար-

տասուաց մեղուցեալ հողւոյս , ո՞չ զի լուացից զաղտմութի մեղաց . զի ապրեցայց 'ի ձեռաց անողորմ հրեշտակաց՝ որ արկանեն զամբարիշտն 'ի հուր գեհեննին . երանի թէ լայի հանապազ աղաչելով զ.քեզ ա͞ծ , զի մի անարժան գտայց 'ի ժամուն՝ յորժամ գայցես . և մի լուայց զահաւոր զձայնն զայն , թէ երթ 'ի բաց մշա՛կդ անիրաւութեան՝ ո՛չ գիտեմ ուստի ես ։

Ո՛վ բարձրեալ միայն առանց մեղաց , շնորհեա՛ ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբաղում գթութի քո . զի մի յայտնեսցին ծածուկ ամբարշտութիք իմ առաջի տեսողաց հրեշտակաց և հրեշտակապետաց , մարգարէից՝

առաքելոց և արդարոց սրբոց ։ Այլ ապրեցո զիս զամբարիշտս շնորհօք ողորմութեան քո · ընկալ զիս 'ի դրախտն փափկութեան ընդ կատարեալ արդարսն · ընկալ զաղօթս մեղուցեալ ծառայիս քո բարեխօսութեամբ նոցին որք հաճոյ եղեն քեզ՝ յ՟ս ք՟ս տէրդ մեր ։ Եւ քեզ ընդ Հօր և ս՟բ հոգւոյդ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Աղօթք վասն որդեծնութեան ամլոց ։

Ա՟ծ ամենազօր, որ արարեր զերկինս և զերկիր · զերկինս լըցուցեր բազմութ՟բ զօրաց անմարմնոց վ՟ն մեծի փառաց քոց ·

և զերկիր զարդարեցեր պէսպէս բուսովք և տնկովք , ունելով իւրաքանչիւր սերմն ըստ ազգի իւրեանց ։

Եւ զա՟մ ընդերս երկրի բեղմնաւորեցեր պէսպէս անհամար և անպակասելի սերմամբ , տալով ն՟ց զօրու՟ի պտղաբերու՟ե ․ և զզանազան կենդանիս ՚ի գոյ ածեր , պարգևելով ամենեցուն զծնունդ և զաճումն ։

Ստեղծեր և զմարդն ը՟ պատկերի և ըստ նմանու՟ե քո , և զարդարեցեր ազգի ազգի շնորհօք հոգւոյն քո ս՟բյ , և ճոխացուցեր զնա հոգևոր և մարմնաւոր բարու՟ե ․ արու և էգ արարեր զնա , և ա՟ծային օրհնու՟ե քով ետուր նմա զօրու՟թի աճելոյ և

բազմանալոյ ։

Եւ քանզի ոչ եկաց 'ի հրա-
մանս քո զոր պատուիրեցեր նմա,
ա͞մ երևելի արարածք անկան
ընդ պատժովք. վ͞ն որոյ զօրութ͞
բնութե͞ ն͞ց տկարացան, մինչև եր
բեմն 'ի բնաւորական ներգոր-
ծութիւնս իւրեանց պակասիլ ։

Իսկ դու ամենազօր Թագա-
ւոր, որ զարարածս ա͞մ ունիս
ընդ քով իշխանութ͞, և վարես
զամենեսին քաղցրութ͞ կամաց
քոց, զօրացուցանես զտկարսն,
և զամուլսն առնես բազմածին.
բղխեցուցանես զմեղր 'ի վիմէ,
և իւղ յապառաժէ, և կարող
ես 'ի քարանց յարուցանել որ-
դիս աբրահամու ։

Դու զամուլ արգանդ սա-

ուսյի ըստ անսահման ողորմուե̃ քո պտղաբեր արարեր, և բազմացուցեր զզաւակ նր̃ ոպ̃ զաստեղս երկնից բազմութեամբ։

Դու բացեր զփակեալ արգանդ աննայի մօրն սամուելի, և եօթնեակ զաւակօք բարգաւաճեցեր։

Դու զպառաւեալ ամուլն եղիսաբէթ որդեծին արարեր, շնորհելով նց̃ զմարգարէն և զառաքեալն զկարապետն յովհաննէս։

Դու և յովակիմայ և աննայի ՚ի ծերունե̃ իւրեանց պարգևեցեր զաւակ օրհնուե̃ զո̃բ կոյսն մարիամ ա̃ծածին, յորում օրհնեցան ա̃մ ազգ.ք երկրի։

Ասն որդ և մեք նուաստ և տառապեալ ծառայք քո գխնե-

րով զանսահման զօրութիւն քո
զմեծ և զհզօր, և զանճառ մար-
դասիրութիւն քաղցրութեան քո, ան-
կանիմք առաջի անոխակալ տէ-
րութեանդ քո, և պաղատիմք և ա-
ղաչեմք և հայցեմք 'ի քէն բա-
զումողորմ, տո՛ւր տառապեալ
ծառայի քո և աղախնոյ քո այ-
սոցիկ պտուղ որովայնի 'ի փա-
ռաբանութիւն և 'ի գովեստ ան-
ուանդ քում սրբոյ:

Ո՛վ տէր ած մեր՝ խոնար-
հեցո՛ զունկն քո, և լո՛ւր աղաչա
նաց ծառայից քոց, և զուարճա
ցո՛ զսոսա ծննդեամբ զաւակաց,
սնուցանել զնս պաշտօն բարե
երկիւղիւ քո, և առնուլ վար՝ ձս
բարեաց 'ի մարդասիրեդ ըստ առա-
ռատ ողորմութեան քո:

Ո՜վ դու ես միայն ամենա-
զօր թագաւոր, և չիք ինչ քեզ
անհնարաւոր, և քեզ մատուցա
նեմք փառք՝ պատիւ և երկրպա
գութի Հօր և որդւոյ և Հոգւոյն
սրբոյ, այժմ և միշտ և յաւիտ-
եանս յաւիտենից, ամէն:

Աղօթք վասն դժուարածին կնոջ:

Տէր ա̃ծ մեր յ̃ս ք̃ս՝ մեծ
և բարձրեալ, անայլայլելի, ան-
փոփոխելի, և մշտնջենաւոր. որ
իջեր 'ի յերկնից և մարմնացար
'ի ս̃րբյ կուսէն մարիամայ Հոգ-
[illegible] ս̃րբվ. և զապականեալն մե-
ւո[illegible] նութի մեր 'ի նախահօրն
ղ̃ք զ[illegible]՝ որով ամ կանացե
յանցանաց

բնութ̃ե ընկալաւ զպատուհաս անիծից՝ ցաւօք և տրտմութ̃ե ծնանիլ զզաւակ , սրբեցեր աստուածութեամբ քով ։

Եւ արդ՝ աղաչեմք զքեզ մայր դստէր թագաւոր՝ ստեղծօղ և նորոգօղ մեր՝ և բժիշկ հիւանդութեանս մերոյ, բժշկեա՛ և առողջացո՛ (այս անուն) աղախին քո ՚ի հոգեկան և ՚ի մարմնական յախտէս յայսմանէ ։

Առաքեա՛ զօգնութ̃ի քո ՚ի սըր բու̃է քումմէ , և տո՛ւր սմա զօրութ̃ի ծնանիլ զզաւակ ・ որ̃պ զի զպտուղ որովայնի իւրոյ մաքրեալ յա̃մ արատոյ ծննդեամբ սուրբ աւազանին՝ ընծայեսցէ եկեղեցւոյ քում սրբոյ ։

Շնորհեա՛ ծննդականիս այ-

սրբոյ համադասութե̃ և առանց վնասու հասանիլ ՚ի խնդութի̃. և ա̃մ տանց հաւատացելոց աճիլ և բազմանալ ՚ի փառս տէրութե̃ քո, և ՚ի լրումն ա̃ծային քո բանից, եթէ աճեցէք և բազմացարուք։

Այո՛ տէր ա̃ծ մեր, լո՛ւր և այժմ խնդրուածոց անարժան ծառայից՝ և ա̃մցուն որ շուրջ կան աստ, բարեխօսութե̃ անարատ ծնողի քո ս̃բ ա̃ծածնի, և ամենայն սրբոց քոց։

Ո՛վ ՚ի քեզ միածնի որդւոյդ, և անսկզբն և համագոյ հօր քո, և կենդանարար և ամենասուրբ հոգւոյդ՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութի̃, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Աղօթք վասն Թպղայի և ալի՝ որ ոչ մերձենայ 'ի ծառայս քո։

Տ̃ր Յ̃ս Ք̃ս՝ ամենազօր ողորմած՝ լե՛ր պարիսպ և աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն · զի ա̃մ մրրիկ խռովութեցն կարծեաց երկիւղին՝ ա̃մ դիւական չարեաց որք 'ի ծնունդս կանանց տղայկանի զարհուրեցուցանելով այլ կոչեցան դիշատեսիլ երևմամբ՝ պէս պէս ախտիւք թմրութե̃ խելագնացս առնելով, և որ ինչ հաղբից նոցին իցեն չարահնար որոգայթք՝ հեռքեալ հալածեսցին 'ի դիմաց ծառայիս քո, ամէն։

Աղօթք՝ չար նազարի և չար լեզուի, և ամ՟ փորձանաց։

Տէ՛ր ած՟ մարդասէր՝ մարդասիրի հօր որդի դու ես պահապան և օգնական յուսացելոցս ՚ի քեզ, ողորմութ՟ քով նայեա՛ ՚ի ծառայս և պահեա՛ անփորձ ՚ի չարէ և անսայթաք յորոգայթէ երևելի և աներևոյթ թշնամւոյն, ՚ի չար աչաց և ՚ի չար լեզուէ և յաւուր չարէ։

Ա․ղև բարեխօսութ՟ ս՟բ զօրավարացն, ս՟բյն սարգսի զօրավարին և որդւոյ նր՟ մարտիրոսին. և ս՟բյն թէոդորոսի և գէորգայ զօրավարացն, և մերկերիոսի զինաւորին, անդրէի զօրավարին, և չորից զինուորացն՝ բասոսի՝

ևսեբի՝ ևտիգի և բասիլիդեայ, և որյն մինասայ՝ երմոգինեայ և գրաբոսի , և ո̃րց ատոմեանց՝ ոսկեանց և սուքիասանց , խարիթեանց , և ա̃մ սրբոց բարեխօսութե̃ն փրկեա՛ 'ի սրոյ և յա̃մ հարուածոց երևելեաց և աներևութից , և յա̃մ չարեաց պահպանեա՛ զծառայս քո :

Աղօթք առ երկնային զօրսն։

Ընդ անմահ արարչին ըսպասաւորք անմարմինք՝ վերին զօրացն դասապետութի̃ք։ Աթոռք · քերովբէք , և սերովբէք · տէրութի̃ք , զօրութի̃ք և իշխանութի̃ք · պետութի̃ք , հրեշտակապետք , և

հրեշտակք · միքայէլ, և գաբ-
րիէլ՝ պետք վերնական զօրացն
դասուց, որք անլռելի ձայնիւ
փառաբանութ՟ մատուցանէք ա-
մենա՟բ երրորդութե՟ն, և երէք-
սրբեան ձայնիւ եղանակէք զեր
գըս ասելով՝ ողորմեա՛ դու ըս-
տեղծեր մի՛ կորուսաներ, զգոր-
ծըս ձեռաց.քոց մի՛ անտես առ-
ներ · օգնական և պաշտպան
լերո՛ւք ծառայիս ա՟յ։

Աղօթք առ դրան սրբոյ եկեղեցւոյ՝
սրբոյն Յովհաննու ոսկեբերանի։

Տաճար ա՟յ և բնակարան ս՟բ
հոգւոյն, ՚ի քէն ս՟բ աւազա-
նաւն կոչեցայ յորդեգրութ՟ի

Հօրն երկնաւորի։ Այսօր 'ի քեզ կամեցայ պատարագիլ գառն անարատ, և ես դիմեալ եկի առ դուրս քո. և աղաչեմ զքեզ՝ մաքրեա զիս վերստին լուացմամբ, և սրբեա 'ի մեղաց, և արա արժանի մնանել առաջի սրբոյ սեղանոյդ երկրպագուն. որում վայելէ փառք՝ պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

Աղերս առ սուրբ առաքեալսն։

Անմահ գառինն Հզօրի, որ միշտ զենեալ և կենդանի. երկոտասան գառանցդ խմբի, ձեզ այս աղերս մատուցանի։ Ա

պետրոսի և անդրէի • երկուց եղբարց նախակոչի, յակոբոսի, յօհաննիսի ձկնորս որդւոցն զեբեթի • փիլիպպոսի, բարդուղիմէի • Թովմայի և մատթէոսի • յակոբայփեայ • Թադէոսի, շմաւոնի, մատաթէի • երկոտասան առաքելոց, 'ի քէ պսակելոց • այս է բաղձանք սրտից մերոց, փրկել զմեզ յայսոց պղծոց ։

Աղերս առ սուրբ Ստեփաննոս նախավկայն ։

Ս.քէն հայցեմք արտասուագին, նախավկայ տն առաքելին • որ ստեփաննոս բացող երկնին, տեսող զքն յաջմէ ծնողին • լեր

բարեխօս արեամբ քոյին, առ
մեզ հանգիստ 'ի յանկողնին.
արթուն լինիլ յառաւօտին,
բարեբանել զլոյսն անքննին։

—

Մաղթանք առ Տր̃ Լուսաւորիչն մեր։

Լուսաւորիչ հայր պարծանաց, ընկալ զբանս զայս մաղթանաց. և աղաչեա́ զհայրն փառաց, ջնջել զգիր մեր յանցանաց։

Այլև բարեխօսութ̃ ա̃ծ և ժ̃բ հայրապետացն՝ և ուղղափառ եպիսկոպոսաց աղօթիւքն պահեա́ տէր ա̃ծ զծառայս քո։



Պարծանք հաւատացելոց ՚ի քս̄ և գովեստ մր̄ խաչին որ երևեցաւ յերուսաղէմ յաւուր կիւրղի հայրապետին, ՚ի մայիսի է։

Խաչն քրիստոնէից յոյս · խաչն կուրաց առաջնորդ · խաչն մոլորելոց դարձուցիչ ։ Խաչն աղքատաց մխիթարութի̄ · խաչն մեծատանց սանձ · խաչն ամբարտաւանից քակտումն ։ Խաչն ախոյեան դիւաց · խաչն բանսարկուին յաղթութի̄ · խաչն մանկանց դաստիարակ ։ Խաչն աղքատաց մեծութի̄ · խաչն անյուսից յոյս · խաչն նաւավարաց նաւապետ ։ Խաչն տագնապելոց հանգիստ ։

խաչն պատերազմողաց պարիսպ· խաչն Հայր որբոց։ Խաչն վերակացու այրեաց · խաչն անխրատաց դատաւոր · խաչն արդարոց խորհրդակից։ Խաչն նեղելոց հանգիստ · խաչն տղայոց պահապան · խաչն արանց գլուխ։ Խաչն ծերոց կատարումն · խաչն խաւարելոց լոյս · խաչն Թագաւորաց վայելչուն̃։ Խաչն զէն յաւիտենական · խաչն բարբարոսաց աղատուն̃ · խաչն անխրատից իմաստուն̃։ Խաչն անօրինելոց օրէնք · խաչն մարգարէից քարոզ · խաչն առաքելոց պատմուԹիւն։ Խաչն մարտիրոսաց պարծանք · խաչն վանականաց պահապան · խաչն կուսանաց ըղ գաստուն̃։ Խաչն քահանայից

ուրախութ՟ի · խաչն եկեղեցւոյ հիմ՟ն · խաչն տիեզերաց զգուշու՟թի ։ Խաչն մեհենից աւերիչ · խաչն բագնեաց կործանիչ · խաչն ճենճերաց ապականիչ ։ Խաչն հրեից գայթակղու՟թի · խաչն ամբարշտաց կորուստ · խաչն տկարաց զօրու՟թի ։ Խաչն հիւանդաց բժշկու՟թի · խաչն բորոտաց սըրբիչ · խաչն անդամալուծաց ուղղիչ ։ Խաչն պագշոտաց բժշկութ՟ի · խաչն քաղցելոց հաց · խաչն ծարաւելոց աղբիւր ։ Խաչն մերկաց վերարկու · խաչն անբարբառ բարեխօս առ ՟տր վ՟ս ՟ամ հաւատացելոց 'ի ք՟ս ։

Որում վայելէ փառք և երկրպագու՟թի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Անուանք ս՟բ նշանացն՝ որք են բարեխօս վասն մեր։

Բարեխօսութ՟բ ա՟ծային ս՟բ նշանին, և անբարբառ բարեխօսին ք՟ի վ՟ն ազգի մարդկան, սրբոյ կենաց խաչափայտին ք՟ի։ Սուաղակի ս՟բ նշանին. վարագայ ս՟բ նշանին. երևման ս՟բ նշանին։ Հաղբատայ ս՟բ նշանին. վանկոյ ս՟բ նշանին. կաղզուայ ս՟բ նշանին։ Սդինեայ ս՟բ նշանին. սերեխոյ ս՟բ նշանին. մարտուայ ս՟բ նշանին։ Պանձասարայ ս՟բ նշանին. և ք՟ի ս՟բ գեղարդի. գետ արդել ս՟բ նշանին։ Սպարանից ս՟բ նշանին. կարմրակ ս՟բ նշանին. սքանչելագործ ս՟բ նշանին։ Օծուան ս՟բ նշանին. ախթա-

մորայ ոբ նշանին · սանահնու ոբ նշանին : Արոսի ոբ նշանին · կիպրոսի ոբ նշանին · կոստանդինոսի ոբ նշանին : Եւ տապանակի ոբ նշանին · վրաց հոռմոց ոբ նշանին · կոստանդընուպօլսոյ ոբ նշանին : Հապէշու և խպտոյ ոբ նշանին · հացունեաց ոբ նշանին՝ որ 'ի գալատեանն յաւաջագոյն · գոյլակլոյ ոբ նշանին : Հնդու ոբ նըշանին · կապընկայ ոբ նշանին · պիղեւու ոբ նշանին : Հռիփսիմէի ոբ նշանին · բոգու ոբ նշանին · սարի ոբ նշանին :

Եւ այլ ամ ոբ նշանացն՝ որք ընդհանուր տիեզերս իցեն, սոցին անբարբառ բարեխօսութն ողորմեա՛ տր ած ծառայիս .քո :

Հրաշագործութիւն ք՟ն զոր արար։

Նա ք՟ս բժշկեաց ՚ի ժողովրդենէն բազում հիւանդս. լուսաւորեաց զկոյրս. հալածեաց ՚ի մարդկանէ զդևս. սրբեաց զբորոտս. գնացոյց զանդամալոյծն՝ որ ՚ի բեթհեզդայ անկեալ դնիւր Լ՟Ը տարի. և յարոյց ՚ի մեռելոց զչորեքօրեայ մեռեալն. և այլ անթիւ սքանչելիս և հրաշագործութ՟իս արար։ Այն ողորմութ՟են իւրով հեռի արասցէ ՚ի մէնջ, զգլխացաւն, աչաց ցաւն, ականջացաւն, ատամնացաւն, սրտացաւն, միջաց ցաւն, կշտացաւն, փորացաւն, ծնկացաւն. և յա՟մ ցեղ ցաւոց ազատեսցէ զծառայս, ամէն։

ʼԻ բանից սրբոյն Գրիգորի Նարեկաց-
ւոյ՝ ընդգրկմամբ դիւաց այս նուագ
աղօթից, և դիւասարսուռ ջերմա-
տագնապ ախտաւորութեանց՝ սաստու-
ծուլ փարատիչ:

Որդ՝ այսքանեացս անբա-
ւից հրաշից հանդերձիչ հա՛յր ա-
մենաստեղծ՝ անունդ ահաւոր.
ձայն սարսափելի. կոչումն ըն-
տանի. բան համբուրելի. ազ-
դումն սքանչելի. հրաման սոս-
կալի. էու՟ի անքննելի. գոյու՟ի
անձառելի. խսկուԹի անբաւե-
լի. զօրու՟ի անզննելի. կամք ա-
մենաբարի. ծրու՟ի անսահմանե
լի. մեծու՟ի անչափելի. բարձ-

րութիւն անբովանդակելի․ ողջա-
նութիւն անկշռելի․ առաւելութիւն
անհասանելի․ պատճառ որդւոյ
հայրութեամբ, այլ ո՛չ նախադրութեամբ․
քեւ՝ և 'ի ձեռն քոյդ անպարա-
գիր զօրութեանդ՝ սաստեա՛ տագնա
պօղ և դիւական տենդիս ջեր-
մութեանս, որ սպրդեալ մուծա-
ընդ մեղաց՝ զի փախիցէ 'ի մար-
դոյս, զարհուրեալ 'ի օխրալի և
յանբաւելի արեան վտակի՝ գա-
ռինդ երկնաւորի․ որով սըր-
սկեալ միանգամ 'ի մշտնջենա-
ւորս՝ համայն մաքրեցաք։

Նու արդ՝ յայս պատկառելի
խոնարհութեան արքայակերտս խոր
հրդոյ, ամաչեսցէ՛ սատանայ 'ի
գործս չարեաց իւրոցն հրեշտա
կաց․ տանջեսցին և հալածեսցին,

հեռացեալ և արտաքս առաքեալ
'ի շինուածոց խորանէ քումդ-
բնակութե̃՝ յարտաքին խաւարին։
Եւ ջնջեալ մաքրեա՛ զարտա-
սուս ողբոցս 'ի դիմաց մերոց,
և զհառաչումն ձայնիս հեծութե̃
'ի սրտից մերոց։ Եւ յիշատա-
կաւ հարման հեղուսիցն՝ քրտա-
մնափուշ տաժանատեսիլ ողե-
պահանջից, որով պնդեցաւ մխա-
ծինդ քո յաշտարակ խաչին, ցա-
ւեսցի չարին։ Եւ 'ի կողահերձ̃
սայրասուր սլաքէ ուժգին բախ
մանէ, որով զվէրն մեծ ընկա-
լաւ, խոցմամբ սատակեսցի սկզբ-
նաբար մահուն։ Եւ զի խոնար
հեցոյց զզովեալն գլուխ՝ յաւան
դել զոգին 'ի ծոց քո՝ բարձ̃-
րեալ, ապստամբութե̃ անբարի

բարուցն բելիարայ՝ 'ի կո՛ր կոր-
ծանեցի, ամբ հերքեալ 'ի կո-
րուստ։ Ու զի զօղեալ ծածկե-
ցաւ անմահն խսկուն՝ յորովայնի
երկրի, այսու ամբարձեալն հր-
պարտուն՝ կարծեալ գտուողին՝
'ի յատակս մահու դժոխոց՝ մը-
թին ստուերին՝ յառեալ դիտես
ցէ՛. և յիշեցէ՛ զառաջին հար-
ուածն անբժշկական, որով մա-
հացաւ դիմամարտուն թիւնից
վիշապին՝ կենարարն կրիւք ա-
մենազօրին։ Վասն զի 'ի փառս
քո՝ Հա՛յր ողորմութ, իբր 'ի գո-
վեստ որդւոյ քոյ՝ հոգւովն սրբ
զայս խոստովանիմ. քանզի ոչ
պիտակ ինչ սոսկ զօրուեն ունի
զմիւսմբն՝ առ մի խորհրդականն
խորուն, այլ զանսկիզբն բանդ-

անձնաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք ։ Եւ քեզ միայնոյ ո՛չ երրորդուե՟դ, հաւասարապատիւ տէրուե՟դ, համաբուն՝ անբաժին ինքնուե՟դ՝ օրհնաբանուի՟, գովուի՟, զօրեղուի՟, և անձառ վայելչուի՟ մեծուե՟, բարեվիճակ հարթութե՟, զուգակշիռ հաւասարուե՟՝

յաւիտեանս, ամէն ։

---

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց գիշերայնոյ, ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ։ ԺԲ

Ընկա՛լ քաղցրուե՟ տէ՛ր ա՟ծ հզօր՝ զգառնացողիս զաղաչանս ․ մատի՛ր գթուե՟ առ պատկառեալս դիմօք ․ փարատեա՛

ա՛մենապարգեւ՝ զամօթական տըխ-
րու̃իս · բա՛րձ յինէն ո՛ղորմած՝
զանբերելի ծանրու̃իս · անջըր-
պետեա՛ հնա՛րաւոր՝ զմահացու-
կրթու̃իս · աւարեա՛ միշտ յաղ-
թօղ՝ զխաբողին հաճու̃իս · բա-
ցադրեա՛ վե՛րնային՝ զմոլելոյն
մառախուղ · կնքեա՛ կե՛ցուցիչ՝
զկորուսչին ընթացմունս · ցըր-
ուեա՛ ծածկատես՝ զըմբռնողին
չար գտմունս · խորտակեա՛ ան-
քննին՝ զմարտողին դիմեցմունս։
Տեառնագրեա՛ քո անուամբդ
զլուսանցոյց երդ յարկիս · պար-
փակեա՛ քո ձեռամբդ զառաս-
տաղ տաճարիս · գծագրեա՛ քո
արեամբդ զմուտ սեմոց սենե-
կիս · կերպացո՛ զքո նշանդ ՚ի
հետս եկից մաղթողիս · ամրացո՛

քո աջոյդ զհանգստեանս խըղ-
ճի · մաքրեսցես 'ի հաղբից ըզ-
ծածկարան անկողնոյս · պահես-
ցես քո կամօքդ զտառապեալ
անձն ոգւոյս · անխարդախ ա-
րասցես զքո շնորհեալ շունչ
մարմնոյս · կացուսցես շրջափակ
զպար զօրուդ երկնայնոյ · կար-
գեսցես 'ի դիմի ընդդէմ դի-
ւացն դասու : Տո՛ւր հանգիստ
բերկրութե մահահանգըյնս նիրհ-
մանն 'ի խորութե գիշերիս , բարե-
խօսութբ հայցուածոց սրբոյ
ածածնիդ՝ և ամ ընտրելոց :
Ամփոփեալ պարուրեա՛ զպա-
տուհան տեսութեց զգայարա-
նացս իմաստից անզարհուրելի
զետեղմամբ՝ 'ի ծփական խռո-
վութեց , կենցաղական զբաղ-

մանց, անրջական երազոց, խօ-
լականաց ցնորից, յիշատակա-
քո յուսոյդ անվնասելի պաշտ-
պանեալ։ Եւ սթափեալ վե-
րըստին ՚ի նինջմանէ ծանրուէ,
ամենազգաստ արթնութբ՝ հո-
գենորոգ զուարթութբ ՚ի քեզ
արձանացեալ, զայս ձայն մաղ-
թանաց՝ բուրմամբ հաւատոց
քեզ ամենօրհնեալ թագաւոր
փառաց անճառից, փառաբանո-
ղաց երկնագումար խմբից եր-
գակցեալ՝ յերկինս առաքել։
Որ դու փառաւորեալ ես յամ
արարածոց յաւիտեանս յաւի-
տենից, ամէն։

Վերստին յաւելեալ կրկին հեծութեն՝ նորին հսկողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի: 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։ Բան · ԽԱ

Որդի՛ այ կենդանւոյ օրհնեալ յամի՝ հօրդ ահաւորի անքննելի ծնունդ, որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ: Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք · հալածին դևք · ջնջին յանցանք · խզին կապանք · խորտակին շղթայք · կենդանածնին մահացեալք · բժշկին հարուածք · ողջանան վէրք · բառնին ապականութիւնք · տեղի տան տխրութիւնք · նահանջին հեծութիւնք · փախնու խաւարն, մեկնի մէգն ·

մերժի մոտաւխուղն · փարատի
մուայլն · սպառի աղջամուղջն ·
վերանայ մութն · գնայ գիշերն ·
տարագրի տագնապն · չքանան
չարիքն · հալածին յուսահատու
թիւքն · և թագաւորէ ձեռն քո
ամենակալ՝ քաւիչդ ամ̃ի ։ Որ ոչ
եկիր կորուսանել զմարդկան ո-
գիս՝ այլ կեցուցանել · թո՛ղ ինձ
զանթիւ չարիսն իմ բազում
ողորմութ̃եդ ։ Զի դու միայն ես
յերկնի անճառ, և յերկրի ան-
զննելի · ՚ի տարր գոյի, և յեզրս
ծագաց աշխարհի · սկիզբն ամ̃ի,
և յամ̃ի · ամ̃ լրմամբ օրհնեալ ՚ի
բարձունս · և քեզ ընդ հօր և
հոգւոյդ սրբոյ փառք յաւի-
տեանս, ամէն ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աստուծոյ։

Բան · ՂԴ։

Սրբոյ երկնաւոր · թագաւոր բարձրեալ · որ բոլորից · ամենից ակնկալուն · ստեղծող տեսականաց · հաստիչ իմանալեաց · պատճառ եղանութեանց · կազմիչ հանդերձելոց · տուիչ լուսոյ · առիթ առաւօտու · պատրաստիչ վաղորդայնի · երեւեցուցիչ երեկորի · տարրիչ խաւարի · արուեստաւոր բարեհնար · իմաստուն գործունեայ · քաւարան օրհնեալ · հալիչ մեղանաց · հալածիչ ցաւոց · քակտիչ դառնութեանց · պահպանարան հանգստեան · հնարք նիրհման · յարմարիչ քնոյ · պարգեւիչ ննջման · շնչոյ յարակարգուն ,

զգաստութե՟ տեւողութի՟ · ցրիչ
ցնորից · յեղանակիչ անրջոց ·
փոխարկութի՟ զարհուրմանց ·
պղպղութի՟ տխրութե՟ց · խա-
փանիչ խիթմանց · ընդարձակիչ
կարծեաց · համադրութի՟ ծըփ-
մանց · ահագնութի՟ խարդախ-
մանց · հարուածիչ դիւաց ·
փախուցիչ ախտից · ընկղմիչ
գայթակղութե՟ց ։

Պաշտպանեա՛ երկնաստեղծ
ձեռամբդ · զօրացո՛ բարձրա-
ցեալ քո աջովդ · ամփոփեա՛ ա-
մենակալդ թեւօք · ծածկեա՛
ա՟ծեան խնամօքդ · ամրացո՛ վե-
րակացութե՟ վերնայնոցդ · շուր-
ջանակի պարսպեա՛ գումարտա-
կօքդ անմահից · 'ի յամենուստ
պարփակեա՛ կցորդութե՟ հրեշ-

տակացդ · վանեա՛ զընդդիմա-
մարտն իմ՝ զինուորութե՟ զո-
ւարթնոցդ · պատսպարեա՛ զսա-
սանելս՝ ա՟ծածնիդ մաղթանօք ·
զօրանակս անդրանկացդ՝ բարե-
կարգեա՛ ինձ պահապան ։ Կա՛ց
ընդ աչացս դիմաց՝ և զմտացս իմ
տեսանելիս · զգա՛ստ արա ընդ-
ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս
դանդաղութի՟ · վերացո՛ տէ՛ր ’ի
զգայութեցս՝ զմածեալս յիմա-
րութի՟ · բա՛րձ միա՛յն բարե-
գործ՝ զպատրուակիս թանձ-
րութի՟ ։ Ընդ սկզբան բերմանս
լուսոյ՝ զողորմութի՟ քո ծագեա՛ ·
ընդ ելից արևուն՝ արդարութե՟
արեգակնդ ’ի յանձկութի՟ սրտիս
մոցէ՛ · Ճառագայթ քո փառացդ՝
’ի յիմաստից խորհրդանոց ջա-

հեսցի · խաչիդ տէառնագրումն ընդ շունչս և ընդ մարմինս համասփիռ տարածեսցի ։ Յանձն առնեմ քեզ յաւուրս` զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս` որ 'ի սմին ։ Որ դու ես ա͞ծ անքննելին , առ ամենեսին բաւական , և յամենայնում բովանդակ , օրհնեալ յաւիտեանս , ամէն ։

---

'Ի խորոց սրտից խօսք` ընդ աստուծոյ ։

Բան · ՁԹ ։

Ա͞ծ և տէր · կեանք և արարիչ · ողորմած · գթած · լոյս · երկայնամիտ · անոխակալ · մարդասէր · ամենագութ · պարգեւատու · փրկիչ · օրհնեալ · գով-

եալ · բարեբանեալ ։ Պարան
ամրութե · պատսպարան վստա-
հութե · առանց նենգութե բա-
րի · առանց խաւարի ճառա-
գայթ · քաւիչ մեղաց · ողջա-
ցուցիչ վիրաց · անհասանելեաց
հնարք · անմատչելեաց հպաւոր ·
անյուսութե ելք · անուն քո
խոստովանեալ՝ այ որդի · և հօր
քո ընդ քեզ հզօրի և ահաւո-
րի , և հոգւոյդ ամենակալի և
ընդ քեզ երկրպագելւոյ՝ փառք
և պաշտօն գոհաբանութեան ,
յաւիտեանս , ամէն ։

---

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ ։

Բան · Դ ։

Բարեբանեալդ ած երկնա-
ւոր , միայն արարիչ , որ ամենա-

կալ · մեծութ̃ն ահեղ · գթու̃ն
օրհնաբանելի · ողորմու̃ն խոս-
տովանելի · բարերարութ̃ն եր-
կրպագելի · խնամակալու̃ն պաշ-
տելի · մարդասիրութ̃ն տօնելի ·
պահպանութ̃ն խնկելի · բարձ-
րեալ անքննին · մերձաւոր կա-
մարար · ապաւէն անկասկածե-
լի · մխիթար սրտից · փարատիչ
վշտաց · ապաքինիչ ցաւոց · լու-
սաւորումն վհատութ̃եց · բար-
ձումն պարտեաց · փոխարկիչ
կարեաց · կարգաւորիչ կրից ·
յարմարիչ բանից · սանձարկու
լեզուի · շրջադրութ̃ն շնչոյ ·
կացուցիչ հագագի · ամփոփիչ
խորհրդոց · կնթարան կամաց ·
արձանացուցիչ յուզմանց · հան-
դարտութ̃ն մրրկաց · խաղաղու̃ն

ծփանաց, որ ունիս զթևոց ա-
մենընթաց իշխանականիս, և ի-
մաստութ̃ե նուաճեալ առ քեզ
դարձուցանես:

Գոհաբանեալ միշտ երախ-
տաւոր, որ հեզութ̃ե անհպար-
տութ̃ե երկայնամտեալ հանգ-
չիս տենչանօք անճառ հրաշիւք՝
յանձինս մեր: Թագաւոր էից
համայնից, ամ̃իւ ծանուցեալ
գթած. սկզբնահայր և նախա-
շաւիղ սիրոյն ընթացից. ճանա-
պարհ կենաց, որ առաջնորդես
քաղցրութ̃ե՝ դիմելոյս ’ի լոյս-
վերին: Ձեռնկալու մեծ փառա-
հութ̃ե, որ ոչ թողացուցանես
գայթագղելոյս ’ի վայր կործա-
նել. յուսոյ կերպարան, ճշմա-
րիտ առ հաւատչէիւ աղաչողաց

մտանց յայտնի երեւեալ. ապա-
ւինութի՟ հանգստեան, որ ոչ
երբէք մտանես վտանգի դատա-
պարտութե՟ : Ազատութի՟ շնոր-
հաձիր, որ տաս լիապէս առանց
փոխատրութե՟ փրկանաց. առա-
տութի՟ աննախանձելի, որ քոյին
փառաւորութբ՟՝ զանարգ նիւթ
հողոյս ճոխացուցանես : Պայ-
ծառութի՟ անստուեր, որ ճա-
ռագայթիւք ահեղ բարձրութե՟
պարածածկեալ զթշուառս՝ կր
կին բարգաւաճ առնես : Քա-
ւիչ մեղանաց բազմաց, որ ըղ-
հերբեալս 'ի փրկութե՟ առաջ-
նոյն պայծառութբ՟ նորոգեալ՝
վերստին վայելչացուցանես :
Հնարաւոր դիւրահաս առ ամ՟
անբաւ գերամբարձուի՟ յաւէտ

յաւաջեալ․ ելք վստահութե՟ առ խոստացելոցն վայելս․ երանութի՟ անձկալի, յոր զկենդանութի՟ շնչոյս լքանելն է ախորժելի, զի զքեզ գտից կենդանի։ Կամք անփոխադրելի՝ առ ՚ի քաւութի՟ գերոյս զօրացեալ ամենազօրելի․ անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց՝ բնաւին եղծելոց առնես զսքանչելիս։ Ամենաստեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն, և զհողմով հոսեալն, և զժանեօք գազանաց ծախեալն, ՚ի քթթել ական նորին հիւթականութե՟ անպակաս յարուցանես։ Անհաւասար համարձակութիւն, յորում ա՟ծօրէն պանծանօք պարծելն է իրաւացի։

Հայեա՛ց տէ՛ր յերկնից զը-
ւարթ քաղցրութե՟՝ յամենա-
կործան վտանգ նեղելոյս, և ա-
րա՛ անդորր հանգստական դիւ-
րաւոր՝ ՚ի բազմատագնապս հե-
ծութե՟: Նու զարթուցել գու-
մարս սատակչացն, եթէ սպա-
ռազէնք այսակա՛ն դժնեայ հնա
րաւորութե՟ բռուռն մարտակցաց
պատկանեալ զինուք, եթէ մե-
ղաց ադեղ՝ և քո ատելի կերպա
րանք, եթէ ցաւոց և ախտից
վտանիչ և կորստական նշմարանք
մերժեսցե՛ս հանցե՛ս հատցե՛ս
խափանեսցե՛ս և հալածեսցե՛ս՝
հեռի սահմանաւ խաղաղ տա-
րագրե՟լ անդարձ որոշմամբ վե-
րստին կորստեանն. և կառուս-
ցե՛ս կացուսցե՛ս նպատակ կե-

նայց և ամուր մահարձան՝ զնշան
խաչիդ՝ ապաւինելոյս ՚ի քեզ՝
փրկութիւն։ Եւ յայսմ անպարտ
և անպատիր և անվանելի արուես
տից ահաւորիդ մեծութեն՝ լուծ-
ցին որոգայթքն գաղտնածա-
ծուկ սատանայականք ․ կալ-
տեսցին մեքենայքն ․ վատնեսցին
զայթակղութիւքն ․ խայտառակես
ցին հաղըլիցն դրութիւք ․ յայտ-
նեսցին երևոյթք որսոյն ․ գտցին
նենգողին ծուղակք ․ վերասցին
վարմին վերարկուք ․ տոչորեսցին
որոմանցն բոյսք ․ նզովեսցին
բունաւորին չարաբանութիւք ․
կորեսցի լար խաբէութեն ՚ի մահ
որսողին ․ պարսեսցին պատրո-
ղին բանսարկութիւք ․ պակասես-
ցին զէնք զրպարտողին ․ անկ-

ցի՛ն սուսերք մահաբերին • սու-
զեցի՛ն սադրողին պատրաստու-
թիւնք • արձակեցի՛ն տուունք
տագնապողին ։ Մ.ձայլեցի՛ն
սուտ կերպարանք կեղծաւորին•
սատակեցի՛ն խորոխտականացն
խիստ յարձակմունք • ցրուես-
ցի՛ն կցորդու̃իք կերչացն • բա-
ժանեցի՛ն ազինք աւազակացն •
քայքայեցի՛ն բոյլք բարբարո-
սացն • քանդեցի՛ն ամրոցք ա-
պստամբողացն • արգելցի՛ն ամպ-
րոպք յանդգնելոցն • փարատես
ցի՛ն փորձողին անձրևք • հալես-
ցի՛ և ցամաքեցի՛ եղեամն ազան-
դաւորին ։ Խորտակեցի՛ եղջիւր
դռուողին • մանրեցի՛ն ամբառ-
նալիք դրօշիցն կերպարանաց •
փշրեցի՛ն ամբարհաւաճու̃թիք

հպարտացելոցն · նահանջեսցին
դիմեցմունք ճակատելոցն · քակ-
տեսցին միաբանութիւք զօրացն
բելիարայ , թէ անմարմինք և
եթէ մարմնաւորք , փախիցեն
ընդ նոյն ճանապարհ 'ի մի շաւ-
ղաց հետոց՝ յեօթն տարակոյս ,
'ի գուբն ինձ փորեալ՝ ինքեանք
ընկճեսցին։ Յեղանակեսցին ձը
մերունք ձանձրացուցչին · հատ-
ցի կապն կցորդութե՝ մշտաջան
աւաղակին · նողկասցի մոացս
կայից՝ համբոյր շողոքորթին ·
ընդ միջեալ մեկնեսցին՝ նետա-
ձգութիւք նեղչին · կասցէ 'ի սա-
սանման՝ նաւ խարդախողին ·
խլեսցին յարմատոց անտի՝ ա-
տամունք խածանողին ։
Ո՜վ փայտիդ օրհնութե կե-

նաց , յորում պլկեցար ա̃ծ-
անըմբռնելի · յիշատակաւ բևե-
ռացդ , որով 'ի գործի մահու
մածուցար՝ արարիչդ երկնի և
երկրի · արեամբդ տէրունակա-
նաւ , որով զվիշապն մեծ կար-
թիւ ածեալ որսացար · լեղւոյն
դառնութ̃ե , զոր արբեալ՝ զդե-
ղատուու̃ի կորուսչին արտաքս
հեղեր · պատմաբանութ̃ե ըղձա-
կան ձայնիւք կրիցն սարսափել-
եաց , որով զլրբու̃ի հակառա-
կողին ըմբերանեալ ամաչեցու-
ցեր · անուամբդ անհասականաւ
ա̃մի անթարգմանելւոյդ , յոր-
մէ դողան և դատապարտին սոս-
կացեալ սաստիկ սարսափմամբ՝
բնութ̃իք ա̃մ երևութից և ա-
ներևութից , եղիցին այս ա̃մ

պարգևք շնորհաց՝ խոստովանե-
լոյս ՚ի պաշտպանութիւն, ՚ի բժշ-
կութիւն և ՚ի քաւութիւն։ Եւ մա-
հաբեր դառնաթոյն օձին, և որ
՚ի նմա ազդեաց տիեզերադաւ
չարութիւնն, ՚ի սատակումն եղիցի
նորին. նոյն ինքն ՚ի կորուստ և
յանբժշկական հարուած տան-
ջանացն՝ սովաւ մաշեսցի, կա-
պեսցի և ըմբռնեսցի։ Եղիցի
ողորմութիւն ստեղծողին ընդ իս,
և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ
անբաժանօրէն կապաւ միա-
ցեալ ՚ի մի։

Եւ որ ոք ընթերցցի զայս
աղերս ձայնի՝ մաղթանաց գոչ-
ման՝ աղօթից հայցման, ծերոյ
և տղայոյ, կուսի և երիտասար-
դի, և եթէ յաղախնաց ոք պա-

ղատեսցի ա̃ծ սիրաբար , հաւա-
տարապէս անաչառութ̃ ընկալ-
ցի՛ն ՚ի քէն մասն երանութե̃՝
պարտուց ազատութ̃ , հաստեալ
վերստին յանարատութ̃ նորոգ-
մաքրութ̃ , նկարեալ դարձեալ
դքոյդ կերպարան անփոփոխելի ։
Ո՜հա տիրապէս՝ հը՛նարաւոր
զօ՛րեղ ա՛նպատում ա՛նհաս ա՛նի-
մանալի , տեսցե՛ս աստանօր ՚ի
հառաչանս կողկողանաց այսր
հեծութ̃ , որ ՚ի բոլորից շրթանց
ընծայեալ քեզ մատուցանի , վ̃
հօր քո երկնաւորի և բարերա-
րի , և հոգւոյդ ս̃բյ փառակցի
և կենդանատուի ․ ա̃ծածնիդ
բարեխօսութ̃ , և խնդրուա-
ծովք ա̃մ ս̃բց ։ Ո՜ի դու ըս-
տեղծեր զա̃մ ․ և ՚ի քէն եղեն

ամենայնք · և դու տիրես ամի · և քեզ փառք յամցունց` միդ-ջիսկութէ անժամանակ երրոր-դութեդ , զուգակցապես փա-ռաւորեալ յանբաւս , և յա-ւիտենից յաւիտեանս , ամէն ։

—

'Ի խորոց սրտից խօսք` ընդ աստուծոյ ։

Բան · ԴԴ ·

Ած յաւիտենական · բարե-րար և ամենակալ · ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ · կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւա րի · յոյս ակն ունողաց և եր-կայնմտութի տարակուսելոց ։ Որ ամենարուեստ իմաստութե քո դարձուցանես յայգ զստուե րըս մահու , աննուազ ծագումն

և անմաւտ արեգակն , քանզի ոչ
զօրէ ծածկել զփառս տէրուե̃
քո խաւար գիշերոյ . որում
կրկնի ծունր երկրպագուե̃ ա̃մ
եղելոց՝ երկնաւորաց և երկրա-
ւորաց և սանդարամետականաց ։

Որ լսես զհեծուի̃ կապելոց ,
և հայիս յաղօթս խոնարհաց , և
ընդունիս զխնդրուածս նց̃ ,
աստուա՛ծ իմ և թագաւոր իմ,
կեա՛նք իմ և ապաւէն իմ , յո՛յս
իմ և վստահուի̃ իմ , յիսո՛ւս
քս̃ ա̃ծդ ա̃մի , ո̃՛րդ հանգու-
ցեալ 'ի հոգիս ո̃րց մխիթարուի̃
վշտաց , և քաւարան մեղուցե-
լոց , որ գիտես զա̃մ յառաջ
քան զլինել նոցա ։ Առաքեա՛
զպահպանողական զօրուի̃ աջոյ
քո , և փրկեա՛ զիս յերկիւղէ

գիշերի և 'ի դիւէ չարէ . ո՜չ զի
զյիշատակ սոսկալի և սուրբ քո
անուանդ՝ միշտ համբուրեալ
շրթամբք հոգւոյ ըղձուն շնչոյ,
կեցից պահպանել ընդ այնոսիկ
որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ:

Եւ 'ի դրոշմէ խաչի քոյոյ նը
շանիդ, զոր ա̃ծային արեամբ քո
ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն
շնորհ որդէգրուե̃ զմեզ մկրտե-
ցեր, և 'ի փառս պատկերի քո
նկարեալ յօրինեցեր, այսու
պարգևօք ա̃ծականօք՝ ամաչես-
ցէ՛ սատանայ . քակտեսցի՛ն մե-
քենայքն . բարձցի՛ն որոգայթ-
քըն . պարտեսցի՛ն մարտու-
ցեալքն . պակասեսցի՛ն զէնքն
սայրասուրք . մերժեսցի՛ մէգն .
փարատեսցի՛ խաւարն . մեկնես-

ցի՛ մատախուղն ։ Բազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ՛. վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վ̅ր ծառայից քոց ։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխանութի̅ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

—

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ աստուծոյ։
Բան. ԴԵ։

Արեգակն արդար. ճառագայթ օրհնեալ. լուսոյ կերպարան. փափաք անձկութ̅ե. բարձրեալ անքննին. զօրեղ անպատում. բարւոյ բերկրութ̅ի. յուսոյ տեսութ̅ի. գովեալ երկնաւոր. Թագաւոր փառաց. ք̅ս

տուարիչ. խոստովանեալ կեանք: Նու արդ՝ զթերութն վրիպանաց բազմախաղ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ մատուցեմ յաղերս հաճուն հօր քում բարձրելոյ: Որ վն իմ 'ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութն՝ ամենևին կենաց օրհնութն, վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից: Ոչ թէ յանձն առեր մեռանիլ վն իմ՝ ած և մրդ բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ տուելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր:

Եւ վն̃ արեանդ պատուականի միշտ մատուցելոյ 'ի հաճոյ կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգըք մեղուցեալ դատապարտելոյս · Թողցին պարտիքն · ապաքինեսցի անօթն · մոռասցին պատկառանքն · բարեգործեասցին դատակնիքն · սատակեսցին որդունքն · վերասցի լալն · հանդարտեսցէ կրճուճն ատամանցն · սպառեսցին ողբքն · հատցին արտասուքն · մերժեսցի սուգն · հալածեսցի խաւարն · վատնեսցի հուրն սաստկութե̃ · հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք ։

Եկեսցեն գթութ̃ք կամողիդ և պարգևողիդ կենաց ամենից · ծագեսցի լոյսդ · արագեսցէ

փրկութիւնդ · հասցէ՛ օգնութիւնդ · ժամանեսցէ՛ այցելութիւնդ · կանխեսցէ՛ ցօղդ ողորմութեան , յառաջեսցէ՛ արբուսցէ՛ զանդաստանս պապքեալ՝ անկեալ ոսկերացս թշուառութեամբ 'ի վիհն մահու · ծաղկեցուսցէ՛ պտղաբերեսցէ՛ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ՝ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ , որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց ։ Ո՛ ի ամիւ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո՝ գթած , 'ի քեզ զօրացեալ քև նորոգեսցայց , զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութեամբ 'ի յարութեան արդարոց , հօր քում օրհնեսցեալ ։ Ընդ որում քեզ

փառք , և հոգւոյդ ք՟յ բարե-
բանուին՝ վայելչական գոհուե՟ն ,
այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից , ամէն ։

Գոհաբանութիւն առ երկինս ։

Գոհանամք զքէն ով ամե-
նա՟բ երրորդուին՝ Հայր և Որդի
և Հոգիդ ՟բ , որ ասացեր ա-
րասցուք մարդ ըստ պատկերի
մերում , և առեր հող յերկրէ ,
և փչմամբ օրհնեալ շնչոյ քո՝
գոյացուցեր զմարդն ադամ . վ՟ն
որոյ օրհնեմք զմեծութի՟ն քո ։

Գոհանամք զքէն տ՟ր , որ ըզ-
մարդն ադամ զարդարեցեր եօթ-
նարփեան շնորհօք , և երկրպա-

սան փառօք․ վ՟ն որոյ օրհնեմք զշնորհս քո։

Գոհանամք զքեն Տ՟ր, որ 'ի դրախտն եդեմ եդեր զադամ անճառելի խնդութբ՟, և հրահրաշ ցնծութբ՟․ վ՟ն որոյ օրհնեմք զարարչութիւն քո։

Գոհանամք զքեն տէր, որ յետ պատրելոյն ադամայ՝ յարգելայոս անուն օձէն, և արտաքսելոյն 'ի դրախտէն՝ որով 'ի դժոխս գրաւեցաւ, ազատեցեր․ վ՟ն որոյ օրհնեմք զփրկուի՟ քո։

Գոհանամք զքեն Տ՟ր, որ առաքեցեր զանդրանիկն քո՝ զմիածին բանն, որ վ՟ն մերոյ փրկութե՟ խաչեցաւ, թաղեցաւ, յարեաւ, համբարձաւ․ վ՟ն որոյ օրհնեմք զմեծ մարդասիրուի՟ քո։

Գոհանամք զքէն տէր, որ զս̃բ մարմին և զս̃բ արիւն նր̃՝ պարգևեցեր մեզ կերակուր հոգւոց, և կենդանացուցիչ. վ̃ս որոյ օրհնեմք զպարգևս քո։

Գոհանամք զքէն տէր, որ զմկրտութ̃ի ուսուցեր 'ի յորդանանէ և կոչեցեր 'ի խաւարէ 'ի լոյս, և ետուր զորդեգրութ̃ին վերին. վասն որոյ օրհնեմք ըզշնորհաբաշխութիւն քո։

Գոհանամք զքէն տ̃ր, որ է խորհուրդ եկեղեցւոյ կազմեցաւ 'ի քոյինդ շնորհէ, և խոստովանութ̃բ թողութ̃ի շնորհեցեր. վասն որոյ օրհնեմք զառատապարգև գթութիւնն քո։

Գոհանամք զքէն տէր, որ անձրև և ցօղ տաս երկրի, և

բուսանի հաց և հանդերձ , և ա̃մ մսեղեաց կերակուր · վասն որոյ օրհնեմք զբազմաբաշխ ողորմութիւնն քո ։

Գոհանամք զքէն տէր , որ տաս յաջողուի̃ վաստակոց մերոց , և զշնորհս արուեստաւորաց · վասն որոյ օրհնեմք զբազմարուեստ տուչութիւն քո ։

Գոհանամք զքէն տէր , որ միշտ քաղցրուի̃ նայիս յարարածս քո , և օր ըստ օրէ շնորհես զբազմազեղ ողորմութիւն քո · վասն որոյ օրհնեմք զանչափ գթութիւն քո ։

Գոհանամք զքէն տէր , որ մեղաւորաց և զղջացելոց թողութի̃ շնորհես , ներես , և ո՛չ եղծանես · վասն որոյ օրհնեմք

զանյիշաչարութիւն քո։

Գոհանամք զքեզ տէր, որ զեղանակս տարւոյն, ամառն և ձմեռն, աշունն և գարունն՝ արարեր ըստ բնութ՟ե մերում. վասն որոյ օրհնեմք զարարչագործութիւն քո։

Գոհանամք զքեզ տէր, որ յայսմ պահի ևս ապրեցուցեր ըզ մեզ անվրդով, անահ, և անկասկած. վասն որոյ օրհնեմք զտէրութիւն քո։

Գոհանամք զքեզ տէր, որ զմեզ ՚ի մահատարաժամէ, և յա՟մ պատահարաց պահեցեր. վ՟ն որոյ օրհնեմք զպահպանութ՟ի քո։

Գոհանամք զքեզ տ՟ր, որ ՚ի հրկիզու՟է, ՚ի հեղեղէ, ՚ի շարժէ, ՚ի կայծակէ, ՚ի խորշակէ,

և 'ի սատակմանէ ապրեցուցեր • վասն որոյ օրհնեմք զապաւինութիւն քո ։

Գոհանամք զքէն տէր , որ օրհնեցեր 'ի լեառն ձիթենեաց զկաթուղիկոսունս , զպատրիարգունս , և զեպիսկոպոսունս , որ ճրագ և լոյս եղեն աշխարհի • վասն որոյ օրհնեմք զշնորհաբաշխութիւն քո ։

Գոհանամք զքէն տէր , որ քահանայութի̄ ընձեռեցեր ադամեանս բնութե̄՝ որ հրեշտակաց էր կարգ , յաղագս թողութե̄ յանցանաց մերոց • վ̄ն որոյ օրհնեմք զփրկութիւն քո ։

Գոհանամք զքէն տէր , որ զսարկաւագունս , զտիրացուս , և զջահընկալս սահմանեցեր •

վասն որոյ օրհնեմք զլուսաւո-
րութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ
զբանաւոր հօտ զժողովուրդս
քո՝ ընկալեալ ունիս 'ի ծոց քո,
և որպէս զտապանն Նոյեան ա-
զատես 'ի հեղձմանէ մեղաց. վ̃ն
որոյ օրհնեմք զզարմանահրաշ
գթութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ
զմեղուցեալ ժողովուրդն՝ ոչ
պատժես 'ի տան քում քաւա-
րանի, այլ զդարձումն նկա-
տես. վասն որոյ օրհնեմք զեր-
կայնամտութիւն քո։

Եւ վ̃ն մեծի և բարձու ո-
ղորմութ̃ե քո՝ խոնարհեցո՛ տ̃ր
զունկն քո 'ի ժամուս յայսմիկ
և տո՛ւր մեզ յերկնից 'ի սրբու-

թենէդ՝ շնորհ, ձիր, ողորմու-
թիւն. քաղցրութիւն, կարո-
ղութիւն, մեղաց թողութիւն.
առատութ՟ի, փարթամութ՟ի,
աշխարհիս խաղաղութ՟ի. խըն-
դութիւն, լուսաւորութիւն։
Հաւատ, Յոյս, Սէր. մաքրու-
թիւն, առաքինութ՟ի, բարեաց
լիութ՟ի. հանդարտու՟ի, անդոր-
րութ՟ի, զգօնութ՟ի. հաշտու՟ի,
և օրհնեալ արքայութիւն։

Եւ քեզ ընդ որդւոյ. և ընդ
ս՟բ հոգւոյդ վայելէ փառք և
պատիւ յաւիտեանս, ամէն։

Աղօթք սրբոյն Ներսէսի լամբրոնացւոյ առ խաչեցեալն Քրիստոս։

Առ քեզ ակնարկեմ աղբիւր ջրոյ կենդանւոյ, և աղաղակեմ՝ թէ ընդէ՞ր է ինձ սրբութեան ծարաւել, երբ դու ես իմ սրբութիւն. կամ ընդէ՞ր փափաքեմ մաքրութեան, մինչ դու ես իմ մաքրութիւն։ Այսուհետև ուսեալ՝ եթէ դու ես իմաստութիւն մեզ յԱյ տուեալ արդարութիւն և սրբութիւն, քեզ փափագեմ, քեզ տռփամ. տուր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ զովացումն՝ աղբիւր ջրոյ կենդանւոյ խաղացելոյ 'ի կեանսն յաւիտենից։

Ծարաւիմ ըմպել 'ի կրկին
վտակաց կողիդ, որով և սրբեալ
սիրով քո զմայլիմ: Քաղցնում
ուտել զմարմինդ, որով կեն-
դանացեալ անմահ ես լինիմ:
Փափագեմ ողջագուրել զխոց-
ուած ձեռացդ, որով հասեալ
առ քեզ պսակիմ: Տռփամ ակ-
նարկել զդէմսդ, որոյ ապտա-
կաւն 'ի վերայ իմոց բժշկիմ:
Աղվաղակի լո՛ւր ինձ տ՟ր՝ զի
նուաղեաց յինէն հոգի իմ:

Նուաղեցաւ հոգի իմ 'ի քո
անճառուդ սիրոյ. տոչորեցայ յառ
քեզ տռփանացդ՝ ո՛վ վասն իմ
խաչեալ: Թալկացայ, յորժամ
առ քեզ ակնարկեմ՝ ո՛վ վ՟ն իմ
ապտակեալ: Եւ աղաղակեմ՝
ցո՛յց ինձ զդէմս քո, զի ձայն

քո քաղցր է, և դէմք քո գե-
ղեցիկ. Ե՛րբ եկից երևեցայց
քեզ։

Արդ լո՛ւր ինձ, և արբեցո՛
զիս վաղվաղակի քո գթութե՛դ
և սիրով, զի և լինէն՝ որ հա-
ւատամ 'ի քեզ, բղխեսցեն աղ-
բիւրք ջրոց կենդանութե՛ն։

## ՎԵՐՋ